№ 2 ՓԵՏՐՈՒԱՐ 1895

ГОДЪ 7-Й АРТИСТЪ ГОДЪ 7-Й

ЖУРНАЛЪ ИЗЯЩНЫХЪ ИСКУССТВЪ И ЛИТЕРАТУРЫ.

Въ 1895 г. „Артистъ“ будетъ попрежнему выходить ЕЖЕМѢСЯЧНО по той же программѣ.

Въ журналѣ помѣщаются статьи по всѣмъ искусствамъ (**живопись, архитектура, скульптура, музыка и театръ**), **романы, повѣсти и разсказы**, преимущественно оригинальные, монографіи о русскихъ писателяхъ, композиторахъ, артистахъ и художникахъ (со снимками съ ихъ произведеній), критическія статьи, статьи по разнымъ вопросамъ русской и иностранной литературы, мемуары и письма писателей, художниковъ и артистовъ, періодическіе образы литературной, художественной и театральной жизни всей Европы, драматическія произведенія, преимущественно современнаго репертуара, музыкальныя произведенія, корреспонденціи, хроника, рисунки постановокъ пьесъ, портреты и снимки съ картинъ и рисунковъ русскихъ и иностранныхъ художниковъ, исполненные **офортомъ, геліогравюрою, фототипіей, фототипіей въ краскахъ, фототипіей на мѣди, автотипіей и хромографіей.**

Въ 1895 году въ беллетристическомъ отдѣлѣ будутъ напечатаны романы и повѣсти гг. А. П. Чехова, Г. А. Мачтета, П. П. Гнѣдича, И. Н. Потапенко, Вас. И. Немировича-Данченко, В. Л. Величко, М. Н. Альбова, Влад. И. Немировича-Данченко, А. А. Луговаго, Е. П. Гославскаго, И. Л. Щеглова-Леонтьева, В. М. Михеева, К. М. Старюковича, П. М. Невѣжина, А. А. Вербицкой, А. М. Васнецова, Т. Л. Щепкиной-Куперникъ, Н. И. Тимковскаго и друг.

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԵՒ

ՅԱՒԵԼՒԱԾՈՎ

Դաստիարակների համար

ՏԱՍՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 2

ՓԵՏՐՒԱՐ

ԹԻՖԼԻՍ

Типографія Груз. Изд. Т—ва. Տպար. Վրաց Հրատ. Ընկ.

1895

Дозволено цензурою. Тифлисъ, 16 февраля 1895 г.

ՓՈՔՐԻԿ ԿԱՌԱՊԱՆԸ ԻՐ ՆԺՈՅԳՆԵՐՈՎ

(«Ձիփ-ձիի» — մանկական խաղ)

ԱԶԱՏՒԱԾ ԳԵՐԻՆ

Իմաստութեան և հանճարի աշխարհում — Միացեալ-Նահանգներում, քիչ ժամանակ առաջ, գերիները գնելու և վաճառելու վատ սովորութիւնը ընդունուած էր: Մարդկանց հանում էին հրապարակ և ծախում, ինչպէս մենք ծախում ենք եզը կամ ոչխարը: Շատ մարդիկ հէնց այդ առևտրով էին պարապում:

Մի անգամ հարուստ մարդկանցից մէկը գնեց շուկայից մի աշխոյժ նեգր: Այդ պատանին վերին աստիճանի ժիր, աշխատասէր և քաղցրաբարոյ էր և, որ ամենից առաւելն է, նա ունէր նուրբ զգացումներ, անչափ սէր դէպի իր ծնողները և դէպի իր հարազատները:

Հէնց այդ էր պատճառը, որ նա դառնապէս լացում էր, յիշելով իր քոյրերին, իր միակ եղբօրը, իր գթառատ մօրը: Մի օր հազիւ նրան ուշքի բերին, երբ տեսաւ իր ծերունի հօրը շուկայում իբրև կենդանի ծախուելիս:

Նեգրը, ինչպէս ասում են, «խելքը գլխին» տղայ էր: Նա թէև չարչարւում տանջւում էր,

բայց և այնպէս իր պաշտօնը կատարում էր ճշտութեամբ, դեռ ազատ ժամերում էլ սրա-նրա համար զանազան յանձնարարութիւններ էր կատարում, շատ անգամ էլ այդ մասին առատ վարձատրութիւններ էր ստանում, այդ փողերի վրայ աւելացնում էր և տօն օրերին իրան ընծայուած փողերը. այդպիսով ժողովել էր նա քառասուն տալէր:

Իր տիրոջ որդկերանց հետ ապրում էր իբրև հաւատարիմ ծառայ և հարազատ եղբայր:

Աշխարհում շատ բաներ են պատահում, շատ բան էլ փոխւում է: Գերիի տիրոջ գործերը վատ գնացին, անյաջողութիւն անյաջողութեան ետևից և նա փողի խիստ կարօտութիւն ունենալով, մտածեց իր գերին ծախել: Այդ բանը նեգրը իմացաւ: Նրա համար ոչ թէ ծանր էր, որ միւս օրը անասունի նման պիտի վաճառուէր և, ո՞վ գիտէ, մի անգութ, անողորմ մարդու, այլ գերութիւնը նրան զզուեցրել, մաշել, քայքայել էր և նա ուզում էր թռչել դէպի իր քոյրերը, իր մայրը, ուզում էր որոնել իր ծերունի հօրը և ազատել նրան: Եւ ահա նա մտածեց նրան գնալ իր տիրոջ մօտ և խօսել նրա հետ:

Այդպէս էլ արաւ:

«Ա՜խ, ինչ լաւ կըլինէր, եթէ իմ ժողոված քառասուն տալերը ստանար և ինձ ազատէր», մտածում էր ինքն իրան:

Առաւօտը երբ արեգակի լոյսը մեռած աշխարհը կենդանացրեց, գերին սիրտ առած մոտաւ տիրոջ մօտ և երկիւղով ասաց.

«Գիտեմ, տէր իմ, որ այսօր ինձ պիտի ծախես, ասա խնդրեմ, որքանով ես մտադիր ինձ վաճառել»:

«Կարօտութիւն ունեմ, եթէ քառասուն տալեր սուղ լինի, պիտի յօժարեմ», եղաւ նրա պատասխանը:

Գերիի սիրտը թրթռաց. նրա աչքերում արտասուքի կաթիլներ երևացին, հանեց գրպանից քառասուն տալեր, դրեց տիրոջ սեղանի վրայ:

«Ազատ եմ, ազատ եմ», ասաց նա և դուրս թռաւ տնից: Քիչ էր մնում որ ուրախութիւնից գժուէր. շուտով վերցրեց նա իր շորերը, համբուրեց իր ծանօթների հետ և գնաց իր ծննդավայրը, գրկեց իր լացող մօրը և դողդոջուն ձայնով գոչեց. «Մայրիկ, ինքս փրկեցի ինձ»:

Այն օրից սկսած գերութեան դառն բաժակը խմած պատանին մի միտք ունէր միայն —ազատել և իր ծերունի հօրը…

Ի. Մ—ԵԱՆՑ

ՄԱՏՆԱՉԱՓ ՍՈՒՐԲԷՆԸ

(Հէքիաթ)

Մի նշանաւոր կախարդ ճանապարհորդում էր։ Ճանապարհին նա յոգնեց, մտաւ մի աղքատ ընտանիք ու խնդրեց որ իրան թոյլ տան այնտեղ գիշերելու։

Տան տիկինը կախարդին շատ սիրով ընդունեց և տուաւ նրան կաթ և խմիչով հաց։

Թէև այդ ընտանիքում ամեն բան կարգին էր, բայց տան տիկնոջ դէմքին տխրութիւն էր նկատւում։ Կախարդը շատ հետաքրքրւեց իմանալ նրա տխրութեան պատճառը, և իմացաւ որ որդի չունենալն էր նրան շատ նեղացնում։

—Ինձ նման երջանիկ աշխարհիս երեսին ոչ ոք չէր լինիլ, եթէ ես ունենայի մի տղայ, մինչև անգամ բթամատի չափ, ասեց կինը լաց լինելով։

Կախարդը շատ խղճաց տան տիկնոջը և տուն վերադարձաւ թէ չէ, իր յուշկապարիկին հրամայեց գնալ իրան հիւրասիրութիւն ցոյց

տուող տիկնոջ մօտ և կատարել նրա ցանկութիւնը։

Այդպէս էլ եղաւ։ Յիշեալ կինն ունեցաւ մի տղայ շատ և շատ փոքրիկ։

Ցուշկապարիկը դարձաւ նրա կնքահայր և անունը դրաւ Սուրէն։ Կնքահայրը փոքրիկ Սուրէնին շքեղ զուգեց. ծածկեց տերևներից շինած գլխարկը, հագցրեց սարդի ոստայնից հիւսած շապիկ և աղւամազից գործած զգեստներ։ Ոտներին հագցրեց խնձորի կեղևից կարած գուլպաներ և մկան կաշուից էլ կարած կօշիկներ, մօր արտևանունքներից էլ երկու մազ պոկելով՝ կապեց նրանցով այն գուլպաները։

Եւ ճշմարիտ որ Սուրէնը իր հօր բթամատից աւելի չըմեծացաւ, ուստի և նրան հարկաւոր էր լաւ խնամք և մեծ ուշադրութիւն, որովհետև Սուրէնը երբեմն դաղտնագողի մտնում էր փոքրիկ երեխաների գրպանները և այնտեղից միրգ, կամ ուրիշ քաղցրեղէն հանում։ Եթէ այդ գողութեան ժամանակ երեխաները վրայ էին հասնում, Սուրէնին շատ խստութեամբ պատժում էին. կեռասի կորիզներով լի պարկի մէջ էին գցում նրան և այնքան թափահարում էին պարկը, մինչև խեղճ Սուրէնի ձեռքերն ու ոտները ուռչում էին կորիզների հարուածներից։ Այդ ժամանակ

փոքրիկը աղաչանք-պաղատանքով խոսք էր տալիս նրանց միւս անգամ այլևս չըգործել նոյն յանցանքը։

Մի անգամ Սուրէնի մայրը կարկանդակ թխելու համար խմոր պատրաստեց և պնակով դրաւ դարանի վրայ։ Սուրէնը շատ ուզեց տեսնել թէ ի՞նչ կար այդ պնակի մէջ, բայց անզգուշաբար թաղուեց խմորի մէջ.

Սուրէնը անելանելի դրութեան մէջ էր։ Չըգիտէր ի՞նչ անէր, ի՞նչպէս ազատուէր։ Նա ոտի կանգնեց և այնպէս սաստիկ սկսեց շարժել իր գլուխն ու ձեռքերը, որ խմորը բարձրացաւ ու ցածրացաւ։ Մայրը նկատելով այդ, շատ վախեցաւ, նա կարծեց թէ խմորը կախարդուել էր. նա ներս մտնող ածխապանին ասեց.

—Տէր, քեզ եմ ընծայում այս խմորը։

Ածխապանը շնորհակալութիւն յայտնեց տանտիկնոջը, խմորը դրաւ պարկում, շալակն առաւ և գնաց իր տունը։

Սուրէնի բերանը խմորով լցուել էր: Այնքան չարչարուեց, որ Հազիւ կարողացաւ խմորից պոկուել, յետոյ նա այնպիսի սաստիկ աղաղակ բարձրացրեց, որ վախեցած ածխապանը խը-մորը շպրտեց այգու ցանկապատի վրայ:

Սուրէնն արդէն ազատուած էր: Մի կերպ մաքրեց մարմինը և կաղէկաղ գնաց տուն, ծնողների մօտ: Անկարելի էր նկարագրել մօր ուրախութիւնը, երբ տեսաւ իր կորած որդուն. գրկեց նրան, լողացրեց, մաքրեց և պառկեցրեց անկողնու մէջ:

Մի օր սաստիկ քամի եղած ժամանակ Սուրէնի մայրը բակում կով էր կթում, իսկ Սուրէնը նրա կողքին կանգնած՝ նայում էր: Մայրը վախեցաւ, որ քամին չփախցնէր իր մատնաչափ որդուն և այնտեղ մօտիկ գտնուած ծառից կապեց: Բայց ոչ զարմանք. փոքր ինչ յետոյ յանկարծ նա լսեց մի աղիողորմ ձայն.

—Մայրիկ, մայրիկ, շուտ, օգնիր:

—Ո՞ւր ես, փոքրիկս, ո՞ւր ես, բացականչեց մայրը և նրա գոյնը թռաւ:

—Այստեղ՝ կովի բերանումն եմ, մայրիկ, շուտ, ուր որ է՝ կուլ կըտայ ինձ:

Կովը ծառի տակ խոտ պոկելու ժամանակ՝ փոքրիկ Սուրէնին էլ խոտի հետ բերանն էր դրել:

Սուրէնի բախտից կովը յանկարծ բացեց իր

բերանը և նա աղաղակ բարձրացնելով՝ վայր ընկաւ կովի բերանից։ Մայրն իսկոյն փըռեց իր փէշը և այդպիսով փրկեց իր մատնաչափ չարաճճի որդուն։

Սուրէնը սրանով չըպրծաւ, այլ անթիւ փորձանքների կրկին հանդիպեց։ Մի անգամ նա անտառում զբօսնում էր։ Ագռաւը իր կերակրի հետ վերցնելով՝ փախցրեց մատնաչափ արարածին, տա-

րաւ և բաց թողեց մի քարափի գլխի: Սուրէնն այնտեղից ընկաւ ծովը ու մի ձուկ կուլ տուաւ խեղճին: Այդ ձուկն էլ ընկաւ ձկնորսի ուռկանը. ձկնորսը շատ հաւանեց ձկանը, տարաւ թագաւորին ընծայ: Ձուկը մորթեցին թէ չէ՝ Սուրէնը կենդանի դուրս պրծաւ ձկան փորից և կանգնեց գետնին: Թագաւորը շատ զարմացաւ, տեսնելով ձկան փորից դուրս եկած մի արարած, տարաւ նրան և պալատում շնորհեց մի առանձին սենեակ:

Թագաւորն այնքան սիրեց մատնաչափ Սուրէնին, որ յաճախ որսի գնալու ժամանակ նրան կանգնեցնում էր իր ձիու թամբի գլխին, իսկ երբ անձրևը վրայ էր հասնում ճանապարհին, իսկոյն իր ծոցում պատսպարում էր նրան:

Մի անգամ թագաւորը հարցրեց Սուրէնին և երբ իմացաւ որ նա աղքատ ծնողների զաւակ է, ասաց նրան.

—Գնա՛ տեսութիւն ծնողներիդ, և հետդ տար այնքան ոսկի, ինչքան վերցնել կարող ես:

Սուրէնը ճարեց մի քսակ, մէջը դրաւ մի ոսկի, շալակն առաւ և ճանապարհ ընկաւ:

Նա քսակը շատ դժուարութեամբ էր տանում, կարծէք թէ շալակած լինէր լեռը պարկ: Սուրէնն երկու-երեք ժամուայ ճանապարհը՝ երկու օր և երկու գիշերուայ մէջ անցաւ, այն էլ անդադար կանգ առնելով: Վերջապէս

սաստիկ յոգնած նա հազիւ հասաւ այն գիւղը, որտեղ իր ծնողներն էին ապրում:

Ծնողները տեսնելով իրանց մատնաչափ զաւակին, շատ ուրախացան, մանաւանդ զարմացան որ Սուրէնը կարողացել է մի ոսկի շահել (որովհետև նրա համար մի ոսկին էլ ծանր էր)։

Սուրէնին նստեցրին տխլի կճեպի մէջ, դրին կրակի հանդէպը և երեք օր շարունակ տխլի միջուկ էին ուտեցնում: Սուրէնը սրտով ուզում էր թագաւորի մօտ գնալ, բայց գետինը թաց էր, և նա չէր համարձակւում դուրս գալ տնից։ Մայրը օգնեց նրան և նստեցրեց ձեռքի ափին և այնպէս տարաւ թագաւորի պալատը։

Թագաւորի բոլոր պալատականները սիրում էին կայտառ Սուրէնին և զւարճանում էին նրա չարաճճիութիւնները տեսնելով։ Մատնաչափ արարածը այդպէս չարաճճի և համարձակ էր ծնուել։ Նա սիրում էր իր քաջութիւնն ամենքին ցոյց տալ,—հրացան արձակելը և նետ ու սուր գործածելը նրա սովորական պարապմունքներն էին։ Բայց երկար չէր կարողանում շարունակել այդ, նա շուտով յոգնում էր։

Մի անգամ նա այնպէս սաստիկ յոգնեց, որ քիչ էր մնում հոգին աւանդէր։

Անքահայր յուշկապարիկը դարձեալ խղճաց Սուրէնին և նստեցնելով մկներ լծած կառքը,

տարաւ նրան իր բնակարանը, խնամեց, առողջացրեց և կրկին բերեց Թագաւորի պալատը։

Խեղճ Սուրէնին մի անգամ մեղադրեցին, իբր թէ նա ցանկացել էր պալատական խոհարարին թունաւորել։ Մատնաչափ մարդը շատ պաշտպանեց իր անմեղութիւնը, բայց ոչինչ չեղաւ և հետևանքն այն եղաւ, որ նրան մահւան պատիժ նշանակեցին։

Այդ միջոցին Սուրէնը նկատեց, որ մի ջաղացպան բերանը բաց՝ իրան է նայում, իսկոյն ցատկեց և ընկաւ նրա բերանը։ Ո՛չ ոք չընկատեց, թէ մի ակնթարթում ուր կորաւ Սուրէնը, բայց նա ի՜նչպէս կարող էր հանգիստ մնալ ջաղացպանի փորում. Սուրէնը սկսեց ման գալ և մինչև կոկորդը բարձրանում էր։ Ջաղացպանը շատ էր տանջւում, բայց չէր կարողանում պատճառն իմանալ։ Շատ բժիշկներ աշխատեցին նրան առողջացնել, սակայն ոչինչ չըկարողացան անել։

Պարզ օրերից մէկն էր։ Ջաղացպանը նստած իր տան լուսամուտի առաջ՝ տխուր աչքերով նայում էր դուրսը, նա մտքումը տրտնջում էր, որ հիւանդութեան պատճառով չի կարողանում դուրս գնալ և վայելել այն օրւայ բնութեան քաղցրութիւնը։

Ահա այդ տխուր մտածմունքի մէջ էր նա, երբ յանկարծ յօրանջեց։ Եւ ի՜նչ հրաշք, իսկոյն

Սուրէնը դուրս թռաւ մութ բանտից (բերանից) և ցատկելով կանգնեց ջաղացպանի առաջ: Ջաղացպանը շատ զարմացաւ տեսնելով այդ, խսկոյն նա հասկացաւ, որ իր հիւանդութեան պատճառն իր առաջ կանգնած մատնաչափ արարածն էր: Սաստիկ կատաղեց նա, չը գիտէր բարկութիւնից ինչ անէր. բռնեց Սուրէնին և շպրտեց դէպի իր տան առաջ վազող գետը: Թշւառ Սուրէնը ընկաւ գետը, ձուկը կուլ տւաւ նրան:

Փոքրիկ չարաճճին այս փորձանքից էլ կարողացաւ իր գլուխն ազատել և կրկին անակնկալ յայտնւեցաւ թագաւորի պալատում:

Պալատում ամենքը գիտէին, որ Սուրէնը բոլորովին անմեղ էր և նրան ի զուր էին մահւան պատիժ նշանակել: Թագաւորը այժմ ողորմած աչքով նայեց նրան, իշխանութիւն շնորհեց և գեղեցիկ զուգել տւաւ: Թիթեռի թևերից շապիկ և հաւի կաշից կօշիկներ կարեցին նրա համար, ասեղ տւին նրան սրի տեղ և մի թամքած մուկ՝ ձիու տեղ:

Մատնաչափ Սուրէնը ահա այսպէս զուգւած-զարդարւած՝ թագաւորի և պալատականների հետ միշտ որսի էր գնում և ամենքը հիանում էին նրան նայելով և նրա ճարպիկութիւնները տեսնելով:

Գարնանային զւարթ օր էր: Սուրէնը նրա-

տած իր մկան վրայ, հապառ-հապառ քշում էր։ Այդ միջոցին յանկարծ թփերի միջից դուրս թռաւ մի կատու, յարձակուեց մկան վրայ, իր սուր չանգերով բռնեց նրան ու ուզեց կուլ տալ։ Սուրէնը մերկացրեց իր թուրը և սարսափելի կենդանուն վախեցնելով փախցրեց։ Բայց և

այնպէս կատուի չանգերը պատռել էին Սուրէնի զգեստները, կուրծքն էլ սաստիկ ծուատել։

Կնքահայր-յուշկապարիկը այդպիսի դժբախտ դէպքերում միշտ պատրաստ էր իր կնքածին օգնելու։ Այս անգամ էլ Սուրէնին տարաւ իր տունը, առողջացրեց և դարձեալ բերաւ պալատը։

Այդ ժամանակ նրան հովանաւորող թա-

գաւորը չէր ճանաչում մատնաչափ Սուրէնին։

—Ո՞վ ես դու, հարցրեց նոր թագաւորը, տեսնելով նրան։

—Ես մատնաչափ Սուրէնն եմ, պատասխանեց նա։ Կնքահօրս տանիցն եմ գալիս, առաջ միշտ այս պալատումն էի ապրում, հին թագաւորը շատ սիրում էր ինձ և հովանաւորում, իշխանութիւն էլ նա շնորհեց։

—Լաւ, մնա այստեղ, ես էլ լաւ կըպահեմ, կըպաշտպանեմ քեզ, ասեց նրան նոր թագաւորը։

Թագաւորը սեպհական տուն կառուցանել տւաւ Սուրէնի համար։ Այդ տան բարձրութիւնն մի թիզ ու կէս էր։ Մի բարձր պատւանդան էլ շինել տւաւ, ճաշին իր մօտ նստեցնելու համար։

Սուրէնը ոչ մի ժամանակ այդպիսի երջանկութեան մէջ չէր ընկել, բայց նրա բախտը շուտով շուռ եկաւ։ Մի անգամ թագաւորը իր սիրելի մատնաչափ Սուրէնին մի շքեղ կառք ընծայեց վեց սպիտակ մուկ լծած։ Սրա վրայ թագաւորի կինը շատ նախանձեց, և սկսեց այնուհետև միշտ բամբասել թագաւորի մօտ Սուրէնին, և այնքան արաւ, որ թագաւորը հաւատաց յիշեալ բամբասանքներին և վճռեց շատ խիստ պատժել Սուրէնին։

Առանց այն էլ՝ ուժասպառ Սուրէնը իր

գլուխը պատսպարեց խխունջի խեցիի մէջ։ Նա այնտեղ այնքան ժամանակ թագնուած մնաց, մինչև ուժից բոլորովին ընկաւ։

Վերջապէս այլ ևս չըկարողանալով մնալ այն մութ բնակարանում՝ դուրս եկաւ այնտեղից և որպէս զի բարկացած թագաւորի և նրա կնոջ աչքին չերևար, փախաւ պալատից և հեծաւ մի թիթեռ։ Թիթեռն էլ փախցրեց նրան գիւղը։

Սուրէնը չըկարողացաւ թիթեռին իր կամքով ման ածել, որովհետև ոչ սանձ ունէր և ոչ երասանակ, և այդպէս՝ նա թիթեռի հետ անյայտացաւ, և մինչև այժմ յայտնի չէ Սուրէնի տեղը...

Փոխադր. Դ. Տ.-ԴԱՒԹԵԱՆՑ



ԻՄ ԳԱՄՓՌԸ

ՆԱՒԱԿԻ ԵՐԳԸ

Լողում էի ալիքներում
Ովկիանոսի կատաղած,
Ինձնից անփոյթ ոչ մի ծովում
Չըկար ոչ մի արարած։
Մեծ նաւ չէի՝ որ վախեցած՝
Միշտ օրհասըս յիշէի,
Որ կողերով ես փշրուած
Ալիքներում լողայի.
Ես անվեհեր շրջում էի,
Ալիքներով խաղ անում,
Ես նրանց մէջ հանգչում էի,
Տաք օրերին զովանում։
Երկար-երկար ես շրջեցի
Ձանձրացուցիչ ջրերում,
Երբէք յոյս չըկտրեցի,
Հանգիստ էի փնտրում։
Յանկարծ մի օր ծովից տեսայ
Ապառաժոտ մի աշխարհ,
Ես վազեցի դէպի նա
Դրախտ կարծելով ինձ համար.
Անհիւրընկալ ժայռափերը
Սուր ծայրերով խփեցին,
Եւ դեռ ամուր իմ կողերը
Իսպառ իսպուռ ջարդեցին...
Կտորներս այժմ երկրից
Ազատ ծովում են լողում,
Եւ չեն փորձում լինել նորից
Անհիւրընկալ աշխարհում...

Ա. ԱԹԱՅԵԱՆ

ՍՏՐՈՒԿՆԵՐ

(Շարունակութիւն)

—Այս արգելքը, խօսեց Հրամանատարը, ամենասարսափելին է. գետը այնքան մեծ է, որ կարող է ողողել, տանել մեր զօրքերի մեծ մասը… Խօսեցէք, պարոններ, ինչպէս անցնենք այս ջրով…

—Ձերդ պայծառափայլութիւն, ասաց գնդապետներից մէկը, իմ կարծիքով աւելի լաւ է, յետ դառնանք դէպի մեր տէրութիւնը, ինչ կարիք կայ մեզ հանդիպելու այսպիսի արգելքների, որ կարող են մեծ չարիքի պատճառ դառնալ. փառք Աստուծոյ, աղքատ չենք, հացի կարօտ չենք, ունենք բրնձով լի աչագին շտեմարաններ. ինչն է մեզ ստիպում մի այսպիսի վտանգաւոր արշաւանք գործելու դէպի օտար տէրութիւնը։

—Պարո՛ն, խօսքը ձերն է, ասաց հրամանատարը մի զօրավարի, որը բեխը բարձրացած՝ խօսելու իրաւունք էր խնդրում նախագահից։

—Ես… հը՛… ը՛… խօսեց զօրավարը, կոկորդը մաքրելով,—ես համաձայն եմ պարոնի ասածին, բայց մեզ համար ստորութիւն կըլինի վերադառնալ կրկին հայրենիք. ինչ կասի մեր թագուհին, ինչ կասեն բանւորները. ամենքը մեզ կընախատեն մեր յուսահատութեան համար. բա էլ ինչի զինւորներ ենք, որ ճանապարհի կէսից յետ դառնանք տուն. աւելի լաւ է, որ ամենքս էլ խեղդւենք ջրում, ալիքների բաժին դառնանք, քան թէ վերադառնանք տուն…

—Էշ նստելը մի ամօթ, վեր գալն էլ երկու ամօթ,—

նկատեց հրամանատարը, աւելի ույժ տալով զօրավարի խօսքին։

Խօսք խնդրեց մի ուրիշ գնդապետ։ Նա կամենում էր խօսել, երբ մի զինւոր դողդողալով և վախվխելով մօտեցաւ հրամանատարին և սմաց կիսաձայն.

—Ձերդ պայծառափայլութիւն, ձերդ պայծառափայլութիւն...

—Հը՞. ինչ կայ... պատասխանեց հրամանատարը թըլթուած դէմքով և հրամանատարին՝ պատշած եղանակով։

—Եթէ թոյլ կըտաք, ես կասեմ ձերդ պայծառափայլութեան գետից անցնելու միջոցը,—ասաց զինւորն առաջւանից աւելի կուչ գալով։ Մեծամեծները միմեանց երեսի նայեցին և մի փրթկոց բարձրացրին։

—Դէ, ասա, ասա տեսնենք, ինչ ես ասում։

—Ես կառաջարկէի, խօսեց զինւորը, հրամայէք բոլոր զինւորներին ընդհանուր ուժով գլորել այն գերանը, որ ընկած է ծառի տակ, գցել ջրի մէջ, այնպէս որ մի ծայրը միւս ափն ընկնի, իսկ միւսը մնայ այս ափին...

—Բաւական է, հասկացայ, ընդհատեց ուրախացած հրամանատարը, կեցցես, դու այդ հնարքիդ համար պարգև կըստանաս... Իսկոյն հրամանատարը հրամայեց զինւորներին հաւաքուել և շարժել գերանը դէպի ջրի ափը։ Գերանը, որ իսկապէս մի չոփ էր, շատ ծանր էր մրջիւնների համար։ Բայց նրանք մի կերպ գցեցին ջուրը, այդպիսով կամուրջ պատրաստեցին և անցան նրա վրայով դէպի միւս ափը։ Զօրքերը դարձեալ կարգով շարւեցին և շարունակեցին իրանց ճանապարհը։

VI

Կէսօրւան մօտ էր։

Սև մրջիւնները մտամոլոր և լայնից ուռած աչքերով անհամբեր թափառում էին իրանց մրջնանոցի շրջակայքում։ Բոլորն էլ տխուր էին։

—Ա՜խ, ինչ պիտի լինի մեր վերջը, ասաց նրանցից մէկը։

—Կընտրենք նոր թագուհի և կըսկսենք այսուհետև լինել համերաշխ...

—Է՜, ո՞ւմ համար ես ընտրում թագուհի. երկու ջուխտ և մէկ կէնդ մրջիւնի՞ համար. ի՞նչ շինեցինք հանգուցեալի օրով, որ սրա՛նից յետոյ ինչ անենք։

—Անցուկը մոռացուկ է, աւելացրեց մի երրորդ մրջիւն։

—Չէ, չէ, մենք մրջիւն չենք դառնալ, ասաց յուսահատուած մի ուրիշը, մեր բախտը հէնց էս գլխից է քոռ, մենք արդէն հասել ենք անկման, էլ ոչ մի բանից յոյս չըկայ. այնքան բազմամարդ համայնքից մնացել ենք մի քանի հոգի, շուտով մնացածներս էլ կըջնջւենք աշխարհի երեսից.

—Դէ, բերանդ խէրով բաց արա, խնամի...

—Այո՛, այս՛ եսամոլութիւնը, ըմբոստութիւնը, յամառութիւնը քանի մեր մէջ կայ, մենք մրջիւն չենք դառնալ. մենք սովորել ենք արդէն մեր սեպհական ձեռքով մեր տունը քանդել, այսպէս էլ կըշարունակւի...

—Զուկը գլխիցն է հոտում, նկատեց մի պառաւ մըրջիւն, սրտից ծանր ախ քաշելով։

Այդ րոպէին յանկարծ շարժւեցին մօտակայ մանրիկ խոտերը։ Սև մրջիւնները յետ նայեցին և տեսան, պա՜հ քո տունը չըքանդւի, գետինն ահագին տարածութեամբ լցուած է խժվժող մրջիւններով։ Այդ շէկերն էին։ Ահն ու սարսափը տիրեցին սևերին։ Թշնամու երևալը կայծակի արագութեամբ տարածւեց սևերի մրջնանոցում, որտեղից այս ու այն կողմից դուրս եկան մի քանի փոքրիկ խմբակներ և տեղն ու տեղը չորացած կանգնեցին։ Սրանք տեսնելով թշնամու բազմութիւնը, որ երեք-չորս անգամ աւել էր, քան թէ իրանք, հասկացան որ անհնար է դիմադրել։

Մի սև մրջիւն, տեսնելով իւրայինների անվճռողականութիւնը, ձայն տւեց.

—Տառապեալ եղբայրներ, թշնամու զօրութիւնը շա՛տ է, իսկ մենք թւով քիչ և առանց գլխի, եթէ ստրկութիւնը հաճելի է ձեզ, և եթէ չէք ամաչում, անձնատուր լինենք, իսկ եթէ սիրում էք ձեր մայրենի հողը, մի թողնէք, որ թշնամին ոտք կոխի, քանի որ մենք կենդանի ենք... աւելի լաւ է, մեռնենք ամենքս հայրենիքի փրկութեան համար իբրև քաջ զինւոր, քան թէ անձնատուր լինենք. մեր սուրբ

պարտականութիւնն է կռուել մինչև մեր արեան վերջին կաթիլը... Եւ մրջիւնը դեռ շռայլում էր իր խրախուսական խօսքերը, երբ նկատեց յանկարծ իւրայիններին, որ առանց յետ նայելու փախչում էին այս ու այն կողմը։ Չէկերն ամեն կողմից շրջապատեցին սևերին, ոմանց կոտորեցին, ոմանց վիրաւորեցին, ոմանց էլ գերի առան։ Յետոյ թշնամիները մտան սևերի բրնձով լի շտեմարանները և տեսան ահագին պաշար։ Հրամանատարը շուտով կարգադրեց, որ չէկերի մրջնանոցից մի մայր-մրջիւն բերուի այստեղ և կառավարիչ նշանակուի։ Չէկերը սևերի մրջնանոցում թողին իրանց զօրքերի մի մասը, որ հսկեն սևերին մինչև որ մայր-մրջիւնը կըժամանի իր զօրքերով, և իրանք ճանապարհ ընկան տուն։

VII

Միւս օրը մեծ բազմութիւն էր կանգնած չէկերի մրջնանոցի առաջ։ Բոլոր մրջիւնները, թէ մեծ և թէ փոքր, դուրս էին եկել հանդիսատես, ընդունելու հրամանատարին և զօրքերին և շնորհաւորելու նրանց յաջող արշաւանքը։ Թագուհին կանգնած էր մի բարձր տեղ, շրջապատուած իր թիկնապահներով։ Ամենքի երեսի վրայ ուրախութեան ժպիտ էր խաղում։ Մրջիւններն իրանց բերանին կանաչ ճիւղեր էին բռնել և սպասում էին անհամբեր։ Ահա հեռաստանում երևացին մի խմբակ չէկեր, որոնք առաջ էին ուղարկուած, որ հրամանատարի և զօրքերի երևալն իսկոյն յայտնեն։ Անցաւ մի քանի րոպէ և ահա երևացին զօրքերը։ Նրանց առաջից գալիս էր մի խոշոր մրջիւն։ Այդ հրամանատարն էր։ Յանկարծ մրջնանոցի առաջ կանգնածները բարձրացրին իրանց բեղերը.

—Կեցցէ, կեցցէ, հրամանատարը, կեցցէ...

Թագուհին իր թիկնապահներով առաջ գնաց և իր երկու բեղերով գրկեց հրամանատարին և համբուրեց նրա ճակատը։ Ժողովուրդը դարձեալ թնդացրեց օդը.

—Կեցցէ, կեցցէ...

Հրամանատարը քաղաքավարութեամբ գլուխ տուեց ամենքին և համեստութեամբ ցոյց տուեց զօրքին.

—Այդ փառքը սրանց է պատկանում, ոչ թէ ինձ։

—Առո՜ղջ էք, զաւակներս, ձայն տուեց Թագուհին, մօտենալով զօրքերին։

—Ձեր առողջութիւնն ենք ցանկանում, ձերդ մեծութի՜ւն, գոչեցին զօրքերը միաբերան։

Թագուհին շրջահայեց բոլոր զօրքերին և ասաց.

—Ազատ էք այժմ, որդիք, գնացէք հանգստանալու, ասաց նա։

Զօրքերը ցրուեցին զանազան կողմեր։ Թագուհին էլ հրամանատարի հետ միասին գնացին պալատի առանձնասենեակը, ուր ամբողջ մի ժամ ընկնդրութիւն էր նշանակուած պատերազմի զեկուցման համար։ Ամբողջ երեք օր չէկերը հանդէս կատարեցին։ Յետոյ Թագուհու հրամանով մի մայր-մրջիւն ուղարկեցին իր զօրագնդով երկիրը կառավարելու։

VIII

Մայր-մրջիւնը տեղ հասնելուն պէս, իսկոյն հրամայեց ժողովել իր մօտ բոլոր մնացած սևերին, որոնց հետ խօսելիք ունէր։ Սևերը խկի աչքով աչք չունէին նայելու չէկերին, ուր մնաց թէ կատարեն նրանց մայր-մրջիւնի հրամանը։

—Նա ի՞նչացու է, որ մեզ հրամաններ է տալիս... ասում էր միւսը։

—Մենք իսկի մեր սեպհական Թագուհուն չէինք հպատակւում, նրա՞ն պիտի լսենք... ասում էր մի երրորդը։

—Ո՛չ, ո՛չ, մենք նրա հրամանը չենք կատարիլ, նա ո՞վ է որ... նա միայն իր չէկերին է կարող իր մօտ ժողովել, հրամաններ տալ... Մենք նրա մօտ չենք գնալ... գոչում էին սևերը կատաղած։

—Ազուաւի կամքով որ լինի, ամառն էլ ձիւն կըգայ, ասաց մի չէկ գնդապետ և հրամայեց իր զօրքերին ուժով քշել սևերին դէպի մայր-մրջիւնի մօտ։

Ծանապարհին սևերը երբեմն կատաղած յարձակւում էին չէկերի վրայ, որ կծոտեն, ու փախչեն այս ու այն

կողմ, բայց նրանց բոլոր ջանքը զուր էր անցնում, որովհետև նրանք ամեն կողմից էլ շրջապատուած էին զօրքերով։

Ամեն անգամ գնդապետը գոռում էր.

— Տղերք, քօթակ....

Այդ խօսքը լսելուն պէս՝ շէկերը յարձակւում էին սևերի վրայ և խեղճերին արիւնլուայ անում։ Սևերին ներկայացրին մայր-մրջիւնին, որը շրջապատուած մեծամեծներով ու անթիւ զօրքերով, առօք-փառօք բազմած էր հանգուցեալ թագուհու աւերակ պալատի մուտքի առաջ։ Մայր-մրջիւնը մի խորամանկ հայեացք գցեց սևերի վրայ, ծանրաբարոյ դէմք ընդունելով, ասաց.

—Սիրելի հպատակներս, մեր Տէր Աստուծու ինքնահաճ և անհասանելի կամօքն կործանուեցաւ ձեր հզօր տէրութիւնը մեր քաջազօր բազուկներից, ձեր հզօր տէրութիւնը ընկճուեցաւ մեր առաջ և ջնջուեց յաւիտեան... Ողջ աշխարհին յայտնի եղաւ, որ սևերի հզօր տէրութիւնից աւելի զօրեղը կայ։ Բայց շէկերս որքան զօրեղ ենք, այնքան էլ մրջիւնասէր ենք. մենք յաղթելով ձեզ, չենք թողնիլ այդ անգլուխ ազգը ճակատագրի կամքին, այլ մեր սուրբ պարտականութիւնն է պահել, պահպանել ամեն չարիքներից և խնամել ձեզ, եթէ միայն հաւատարիմ կըծառայէք մեզ և ի զուր չէք գործ դնիլ մեր... ը՜... այսպէս ասած, մեր առած բարութիւնը... Միք տխրիլ, անցեալը անցաւ, այժմ դուք միայն պէտք է ներկայի և ապագայի վրայ մտածէք... Ձեր ներկայ և ապագայ վիճակը ձեզանից է կախուած—եթէ կըլինէք խոնարհ, հնազանդ, հլու հպատակ, այն ժամանակ էլ ձեր դրութիւնը միշտ լաւ կըլինի և ապահով. ես խօսք եմ տալիս, ձեզ բնաւ չըջոկել մերոնցից. դուք շէկերի հետ հաւասար եղբայրներ էք, սիրեցէք միմեանց, սիրեցէք ձեր մեծերին... Իսկ եթէ մէկը ձեզանից փորձէ հակառակուել իմ հրամանին և հակակառավարչական յիմար մտքեր տարածի ժողովրդի մէջ, իմացէք, որ մի այդպիսի մրջիւնի մարմինը մի ակնթարթում երկու կէսի կըբաժանուի։ Իսկ եթէ տեսնեմ, որ մէկը ձեզանից, իբրև արժանաւոր հպատակ, խաղաղութեան սերմեր է ցանում իւրայինների մէջ,

այդպիսին կըլինի իմ աչքի լոյսը և մեծ պարգև կըստանայ ինձանից, բացի դրանից լաւ պաշտօն կըյանձնեմ նրան... Այժմ, սիրելի զաւակներս, գնացէք հանգստանալու և աղօթեցէք ձեր մայր-մրջիւնի երկարակեցութեան համար, իսկ մնացեալը յետոյ...

Սևերին արձակեցին. նրանք ցրւեցին զանազան կողմեր։

Նոյն օրը երեկոյեան մայր-մրջիւնի մօտ ժողով կար, ուր ներկայ էին շէկերի բոլոր մեծամեծները։ Իսկ թէ ինչ խօսեցին, ինչ վճռեցին այդ ժողովում—այդ միայն Աստուած իմացաւ, որովհետև մայր-մրջիւնն արդէն վաղօրօք զգուշացրել էր բոլոր անդամներին, որ խորին լռութիւն պահպանեն ամեն տեղ։

IX

Սևերի պաշարով լի ամբարները հետզհետէ սպառւում էին։ Հարկաւոր էր մշակել շրջակայ արտերը, սկսել վար ու ցանքսը. բայց շէկերը դրա մասին բոլորովին չէին մտածում, որովհետև նրանք արդէն ընտելացել էին ուրիշի ժողոված պատրաստի կերակուրը խժռելուն։ Նրանք բոլորովին չէին յիշում, որ ցրտերը ընկնելուց յետոյ, ամբողջ համայնքին պաշար է հարկաւոր։ Նրանք այդ բանը յիշեցին այն ժամանակ, երբ մի քանի երկրագործ սևեր ըստ իրանց սովորութեան գնացել էին մօտակայ արտը և վարում էին հողը։ Շուտով մայր-մրջիւնը կարգադրեց, որ բոլոր երկրագործներին ուղարկեն արտերը։ Այդ կարգադրութիւնից յետոյ, ես էլ դուրս եկայ տանից. զբօսնելով գնացի անտառը, որ համ մի փոքր մաքուր օդ ծծեմ, համ էլ նայեմ մրջիւնների երկրագործութեան։ Բայց որչափ եղաւ իմ զարմանքը, երբ բոլոր շրջակայ արտերում միայն սևեր էին աշխատում։ Ես գիտէի, որ մրջնանոցի համայնքը կազմւած էր շէկերից և սևերից։ Մտածեցի միթէ շէկերի մէջ ոչ մի հատ երկրագործ չըկայ, և միթէ միայնէ սևերն են կարողանում հողագործութեամբ պարապել։

Այդ մտածմունքի մէջ էի, երբ յանկարծ նկատեցի մի քանի շէկերի էլ, որոնք կանգնած սևերի գլխին, անդադար ստիպում և հրամաններ էին տալիս։ Այդ րոպէին մտաս

կծեցի, հասկացայ թէ բանն ինչումն է. մանաւանդ, որ ես արդէն լսել էի սևերի պետութեան կործանւիլը և նրանց հողում չէկերի բոյն դնելը։ Խեղճ սև մրջիւնները արևի տակին խաշւում էին անդադար աշխատելուց և հէնց որ կամենում էին հանգստանալ, մի փոքր շունչ առնել, չէկերը իսկոյն գոռում էին.

—Ի՞նչ էք սատկածի պէս ռեխներդ բաց արել... շո՛ւտ...

Խեղճերը խոնարհութեամբ նորից սկսում էին իրանց տաժանակիր աշխատանքը։

Բաւական չէ, որ սևերին անգթօրէն այդպէս նեղում էին, մինչև անգամ այնպիսի յիշոցներ և հայհոյանքներ էին թափում նրանց գլխին, այնպիսի մականուններ էին տալիս նրանց, որ լսողն էր չէկերի փոխարէն ամաչում։ Վա՜յ է, եթէ մի ձև մրջիւն, համբերութիւնից դուրս գալով՝ անհնազանդութեան մի փոքրիկ ցոյց էր անում,—չէկերը ոչ միայն այդ սևի կողքերն էին սալջարդ անում, այլ և նրա պատճառով տանջում, չարչարում էին և մի քանի ուրիշ սևերի։ Այդպիսի դէպքերում, չէկերի կարծիքով, ոչ միայն անհնազանդ մրջիւնն է մեղաւոր, այլ և սևերի ամբողջ ազգը, որի հասցէին այնպիսի լկտիածականներ էին ասում, որ, խոստովանք լինի, ամաչում եմ գրելու։

ՅԺՐ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

(Կըշարունակւի)

ԱՊԵՐԱԽՏ ՈՐԴԻՆ

(Ֆրանսերէնից)

Ձմեռ էր։ Փոթորկալից և ցուրտ ցերեկից յետոյ վրայ հասաւ մութ գիշերը։ Քամին վռզվզում էր անտառում և ձիւնը փաթիլ փաթիլ թափուելով՝ ծածկել էր ճանապարհները։ Մի թոյլ և հիւանդ ծերուկ, որ մոլորուել էր մութ անտառում, ապաստարան էր փնտրում, որ կարողանար տաքացնել իր ցրտից սառած անդամները, որոնք հազիւ ծածկուած էին ցնցոտիներով։ Անտառը բոլորովին մութն էր։ Մի լոյս, որ փայլում էր հեռուից, նրան յոյս էր տալիս։ «Այնտեղ անկասկած բնակչութիւն կայ», մրմնջաց նա, և նա չէր սխալւում։ Երկար և ձանձրալի ճանապարհորդութիւնից յետոյ նա հասաւ մի մեծ տան՝ բոլորովին յոգնած և ուժասպառ։ Այս տան տէրը միշտ այս տեսակ բախտաւորութեան մէջ չէ գտնուած։ Ծնուած լինելով մի համեստ խրճիթում, նա թողել էր իր հայրական խրճիթը դեռ փոքր հասակում և ճանապարհուել դէպի ուրիշ երկիրներ, որոնելու հանգիստ և բախտ, որոնք միշտ փախչում էին նրանից։ Գուցէ նրա ժլատութիւնն էր նրան հասցրել այդքան հարստութեան։ Բայց դիզելով այդ մեծ հարստութիւնը, նա կորցրել էր իր սրտում որդիական զգացմունքը։ Երկար ժամանակ չյիշելով իր ծեր հօրը և իր գիւղը՝ նրա սիրտը քար էր դարձել։ Եւ եթէ երբեմն այդ յիշողութիւնը զարթնում էր նրա սրտում, նա աշխատում էր հեռացնել նրան, ինչպէս մի ձանձրալի պատկեր։

Պատրաստւելով բաղխել դուռը, ծերուկը տատանւեց,

որովհետև նա լսեց ներսից տօնային կամ ուրախութեան ձայներ։

«Ա՜ւաղ, ասաց նա ինքն իրան», նրանք ինձ դուրս կանե՜ն.... Աշխարհիս երեսին բախտաւորը չի սիրում տխրել տեսնելով աղքատներին....

Բայց նա օգնութեան կարօտ էր, եթէ նա չբաղխէր դուռը, կըկորչէր։ Վերջապէս նա ծեծեց և դուռը բացուեց։

Հէնց այն րոպէին տան տէրը այգումն էր, զանազան հրամաններ էր տալիս իր ծառաներին։ «Մի կտոր հաց և ապաստարան», գոչեց ծերը մեռելային ձայնով։ Տեսնելով նրա պատառոտած շալիկը, պարոնը կոպտութեամբ գոչեց. «Դուրս, եթէ ոչ ծառաներիս կը հրամայեմ ձեզ դուրս կանեն»։ «Ա՜ւաղ...գոչեց անբախտ ծերուկը», միթէ նա չըտեսաւ իմ սպիտակ մազերս. նա անզօր էր շարունակելու իր ճանապարհը, ուստի տխուր նստեց դրան առաջ։

Բայց եղանակը սոսկալի էր։ Մահուան ցուրտը պատեց ծերունու անդամները. նա զգաց, որ իր վերջին ժամը հասել է։ Այդ զարհուրելի ժամին միայն մի միտք զբաղեցնում էր նրան... իր որդին, որի վիճակը նրան յայտնի չէր և որին նա միշտ յիշում էր։ Նա չըգիտէր նրա ապագան. վերջին անգամ նա տուաւ իր որդու անունը, օրհնեց Աստծուն և հոնգիստ հոգին աւանդեց..... Արշալոյսը դեռ նոր էր բացուել, երբ հիւրերը ցրուեցին։ Յանկարծ նրանց ոտքերին դիպաւ մի դիակ, որը համարեա բոլորովին ծածկուած էր ձիւնով։ Կանչեցին իսկոյն տան տիրոջը։ Նա դիտեց ծերունու գծագրութիւնները և մի ճիչ արձակեց—նա ճանաչեց իր հարազատ հօրը։ Մի քանի ժամանակից յետոյ ապերախտ զաւակը սաստիկ հիւանդացաւ և մեռաւ սաստիկ տանջանքների մէջ, ունենալով միշտ աչքի առաջ իր հօր կերպարանքը, որ մեռել էր ցրտից և սովից իր տաք և հարուստ տան շեմքում։

ՕՐ. ԱՆՆԱ ՆԱԶԱՐԵԱՆ

ԹՈՄԱՍ ԳՈՒԴԻՑ

Երեկոյեան, արևի մայր մտնելուց
Յետ լայն ծովը երեք ձկնորս դուրս եկան.
Ամեն մէկն իր կնոջ մասին էր խորհում,
Խորհում, որպէս հրաժեշտ տուեց իր խեղճ տան։

*

Տղամարդկանց գործ և կանանց արտասուք,
Տունը մի կերպ պահպանելու ձիգ տանջանք..
Բայց ծովում հոծ ալիքների հառաչանք։

*

Երեք կանայք մանում էին շտապով,
Երբ արևից յետ ճրագներ վառեցին,
Լուսամուտից նայում էին երկիւղով.
Սարսափելի գիշեր էր այն, անլուսին։

*

Տղամարդկանց գործ և կանանց արտասուք.
Գիժ փոթորիկ խիստ կատաղած և անվերջ,
Կոհակներին էր հալածում ծովի մէջ։

*

Արևի հետ միասին ափ ձգւեցին
Երեք սառը դի հէնց առաջին յորձանքով.
Կանայք իրանց գլխի մազեր փետեցին,
Աղի արցունք նրանց վրայ թափելով։

*

Տղամարդկանց գործ և կանանց արտասուք.
Ով շուտ վերջ տայ գործին, նրան շուտ հանգիստ,
Իսկ ծովը դեռ ծփում-պատմում է լաց-վիշտ։

ՄԱՐ-ՇԻՄՕՆ

«ԴԱՇՏԱՅԻՆ ԵՒ ՋԵՐՄԱՆՈՑԻ ԾԱՂԻԿ»

(*Մանկավարժական վէպ* ԲԻՉԷՐ-ՍՏՕՈՒ)

I

Նոր Անգլիայում, առանձնացած, քաղաքի մօտ, գտնւում է մի փոքրիկ, բարձր բլուրներով շրջապատուած հովիտ։ Այնտեղ կանգնած էր հին, երկար ժամանակից սևացած դաստակերտը, երեսի կողմից երկու յարկանի, իսկ ետևից կտուրն այնքան ցածր էր, որ դուք ազատ կարող էիք թռչել, չանհանգստացնելով մինչև անգամ ամենավախկոտ մօրը։ Քմահաճ գծագրութիւններով, բլուրների զառիվայրերում, որոնք նմանւում էին ահագին կանաչ կոհակներին, բուսնում էր՝ եղևնին, շագանակը և որնին։ Ցցւած ժայռերը պատած էին փայլուն և հաւասար վարդասարգի տերևներով։ Ի միջի այլոց ստէպ-ստէպ երևում էին զանգակիկը, փիղիկը և ուրիշ վայելուչ բնութեան որդիքը, որոնք առատ վարձատրում էին կորիչին, որը համարձակւում էր բարձրանալ այս տեղերը։ Այդ դաստակերտը բակ չունէր, նա շինւած էր փոքրիկ կանաչ բլուրի վրայ, մեծ կնձնի ստւերի տակ, որի խիտ տերևների միջից երևում էին արևի ճառագայթները, իսկ երեկոյեան լուսնի աղօտ լոյսն ընկնում էր այդ կնձնի տերևների վրայ և մեղմ զեփիւռը հանդարտ տատանում էր նրանց։

Որքան յիշում եմ, մարտի մէկն էր։ Այդ դաստակերտի ցածի յարկում, մի անսովոր շարժում էր բարձրացել։ Այդ շարժման առիթն էր փոքրիկ երեխայի՝ Ջոն և Մարթա Պրիմրոզի, առաջին աղջկայ աշխարհք գալը։ Զորս պառաւ և ամենայարգելի կնքամայրեր Մարթայի սենեակում դողդողալով թէյ էին խմում, ցանկանում էին բարեբախտութիւն փոքրիկին, որին օրօրում էր կնքամայրերից ամենամեծը, երբեմն նայելով, ակնոցների միջից, քնած երեխայի փոքրիկ կարմրած երեսին։

—Այո՛—ասաց Տուտէկը անունով կնքամայրը.—կըլինէ՞ արդեօք մէկը, որ այսպէս երկար ժամանակ լաւ եղանակ լինէր։

—Ճշմարիտ է,—պատասխանեց միւս կնքամայրը. Տրաուբրոյշ,—մինչև անգամ երևում են բողբոջները։ Նայեցէք Լաստենուն, բողբոջներն արդէն ծաղկել են։

—Մարիամն ինձ ասաց, իբր թէ նա տեսել է Երեսնակին *) ծաղկելիս, շարունակեց Տուտեկը—և քանի օր է, որ ես լսում եմ թռչունների ճռուողելը։ Սքանչելի գարուն է։

—Այո՛—ասաց Ջոնսոն կնքամայրը, եթէ այդպէս շարունակաբար լաւ եղանակ լինի, այն ժամանակ Մարթան շուտով կառողջանայ։ Իսկ Նրա աղջիկը՝—շատ գեղեցիկ և չքնաղ երեխայ է։

Հասաւ գիշերը և Մարթայի սենեակը մթնեց։ Կնքամայրերը գնացին տուն, երեխային դրեցին անկողինը և Տուտեկը, յանձն առնելով նայելու նրան, անկիւնում նստած խումփում էր։ Այդ ժամանակ մի բան պատահեց, որ կարելի է միայն ձեզ և ինձ իմանալ։ Ահա թէ ինչ։

Լուսնի ճառագայթների հետ ներս մտաւ ամբողջ անտառային բարի ոգիների և դիցուհիների խումբը։ Պէտք է ի նկատի ունենալ, որ ամեն բոյս ունի իր առանձին ոգին, որ ոչ միայն հոգացողութիւն է անում իրա համար, այլ մինչև անգամ, ծառայութիւն է մատուցանում մահկանացուներին։

Ձմեռը, երբ բոյսերն իբր թէ մեռնում են, այդ ոգիները հանգստանում են հողի տակ, բայց գարնանային արևը կենդանացնում է նրանց և տալիս է նոր ոյժ և ոգիները յայտնւում են այնպէս կայտառ ու բախտաւոր, ինչպէս էին մինչև ձմեռուայ գալը։ Եթէ այս տարի գարունը չըզգանազանուէր չափից դուրս ջերմ օդով, այն ժամանակ, Պրիմրոզ Մարթայի աղջիկը չէր ստանալ բարի ոգիներից պարգևներ։ Հիմա լուսնի արծաթափայլ լոյսով կարելի է նկատել ծեր Փլիկլին, մանկական օրօրոցի մօտ, փաթաթուած մեծ շալով ու բարի հայեացքով։ Սրա յետևից կանգնած էր Երեսնակը, որ հագնուած էր գարնանային հագուստ և ցրտից դողում էր։ Իսկ սրան հետևում էր Լաստենին, ձմեռուայ հագուստով և այնպիսի թեթև քայլերով, որ բոլորովին

*) Բոյս է, որ գարնանն ամենից շուտ է ծաղկում։

ձայն չէր լսում։ Այդ երեք հիւրերը, կամենալով աւելի մօտիկից նայել երեխային և պարզել այն, ինչ որ յատուկ էր նրա գերբնական ոյժին և զօրութեան, յետ քաշեցին օրօրոցի վարագոյրը։

—Սիրելի երեխաս,—ասաց Փիղիկը, նա նոյնպէս թաւոտ է, ինչպէս մենք։

—Ի՞նչ ընծայենք.—հարցրեց Երեսնակը,—ես իմ կողմից ընծայում եմ սրան մութ-կապոյտ աչքեր։ Կարող է արդեօք մութ-կապոյտ աչքերից լաւը լինել։

—Ես տալիս եմ նրան իմ բարեմտութիւնը և ճարպիկութիւնը,—ասաց Փիղիկը.—մենք փիղիկներս, չենք կարող պարծենալ մեր ծաղիկներով, բայց մենք գիտենք ճանապարհ դնել դէպի ամեն կողմը, ուր ցոյց կըտայ նախախնամութիւնը։ Իմաստութիւնը և գիտութիւնը տանում են դէպի բարօրութիւնը։

—Ես կընծայեմ նրան մէկ ուրիշ լաւ բան,—ասաց Լաստենին,—ես աճում եմ այստեղ, պատուհանի տակ, կըորդեգրեմ նրան, կըտամ Լաստենի անունը և ձիրք՝ տեսնելու միշտ ամեն բանի լաւ կողմը։ Կարելի է հարուստ լինել, գեղեցիկ, ունենալ սքանչելի աչքեր, բայց իմ կարծիքով ամենալաւ աչքերը նրանք են, որ միշտ լաւն են տեսնում։

—Շատ լաւ,—ասաց Փիղիկը.—ես միշտ նկատում էի ձեր մէջ զարմանալի ընդունակութիւն, միշտ տեսնել ամեն բանի լաւ կողմը։ Հազիւ թէ փայլում է գարնանային արևը, դուք արդէն տալիս էք բողբոջներ, այն ինչ մեզանից ոչ ոք չէ վստահանում քիթը դուրս հանել և երբէք չեմ նկատել, որ դուք զղջաք։

—Ո՛հ— պատասխանեց Լաստենին—եթէ ես էլ այդպէս ուշ տայի բողբոջներ, ինչպէս մեր կնքամայր Կնձին, կըզրկուէի շատ զւարճութիւններից։ Միևնոյն ժամանակ՝ ես շատ սիրում եմ երեխաներ և նրանց համար էլ շատ շտապում եմ հագնել գարնանային հագուստ։ Այն ժամանակ նրանք ասում են՝ ձմեռն անցաւ։ Ես գեղեցիկ չեմ, նազելի չեմ, և ոչ ոք իմ վրայ ուշադրութիւն չի դարձնում։ Ես գիտեմ միայն ուրախանալ և զւարճանալ ապագայի յոյսով, և այդ պարգևն ընծայում եմ Մարթայի աղջկան։

Այս խօսքերով, Լաստենին թեքուեց օրօրոցին և իր թաւայտերը քսեց երեխայի այտերին, որը ժպտաց երազի մէջ, կարծես ամեն բան հասկացաւ։ Բայց հէնց այն րոպէին կնքամայր Տուտեկը այնպէս խումփացրեց շան նման, որ նա յանկարծ զարթնեց։

Արդեօք այստեղ շուն չըկայ։ Ը՞ս... բարի Ոգիները շարքով, լուսաւոր սանդուղքով գնացին և Լաստենին դարձեալ իր բարի հայեացքը գցեց երեխայի վրայ, և իր թաւ գլուխը սեղմելով լուսամուտին՝ ասաց.

—Ցտեսութիւն, երեխաս։

II

—Արդեօք տեսնուած բան է, որ երեխաներն այդքան երկար քնեն.—սասում էր միւս օրը Տուտէկր կնքամայրը, յօրանջելով և ճըմկտալով,—երևի թէ փոքրիկը հանգիստ երեխայ կըլինի։

Եւ լաւ է, որ երեխան ծնւեց, այդպէս բախտաւոր ըոպէում։ Նրան անհրաժեշտ էր ունենալ լաւ յատկութիւններ։ Նրա հայրը պարտաւոր էր հինգ հարիւր դոլլար դաստակերտի համար և գիշեր ցերեկ անխոնջ աշխատելով, մտածում էր միայն պարտքը շուտով վճարել։ Բայց այդ երեխայից, Ջոն Պրիմրոզն ունէր վեց տղայ, առողջ և ուժեղ կազմուածքով։ Նրա կին Մարթան, որ թոյլ կազմուածք ունէր, պէտք է պատրաստէր ճաշ բազմաթիւ ընտանիքի համար, լւանար, կարկատէր բոլորի համար կտաւիքները։ Ո՞րեմն էլ ինչ ժամանակ կըմնար, որ նա կարողանար փաղաքշել և օրօրել երեխային։ Հազիւ թէ լըացաւ Լաստենու մի քանի շաբաթը, նա արդէն տեղ էր բռնել կողովի մէջ՝ խոհանոցում, որն օրօրում էր մայրը՝ պարապելով տնտեսութեամբ։ Նա ամբողջ օրով պառկած էր այդ կողովի մէջ, պահելով մատը բերանում և երկու կապոյտ աչքերը յառած դէպի պատուհանը։ Ամեն երկու ժամից, մայրը մօտենում, սնուցանում էր նրան և դարձեալ դնում էր կողովի մէջ։ Երկու երեք ժամ քնելով երեխան զարթնում էր ուրախ ժպիտով և սկսում էր մեղմ շշնջալ դաստակերտի յետևից հոսող առուակի նման։

Լաստենու հայրը ճաշին վերադառնալով տուն, վերցնում էր նրան ձեռքը կամ իր գիրկը և երգում, յետոյ Լաստենուն առնում էին եղբայրները, որոնց ձեռքին նա աւելի տիկնիկ էր նման, քան թէ մի կենդանի արարածի։ Բայց Լաստենին ամեն ինչ զարմանալի հանգստութեամբ էր տանում, ժպտալով և ուրախ աղաղակելով։

—Ի՞նչ անուն տանք նրան,—ասաց կնիջը մէկ անգամ Ջոնը—նա ծնւել է գարնանը...

—Անւանենք նրան Լաստենի—կտրեց խօսքը մեծ տղան՝ Սամը։

Նրա առաջարկութեան վրայ թէև ծիծաղեցին, բայց վերջապէս ընդունեցին։

Թէև երեխային մկրտելով տուեցին Մարիամ անունը, սակայն բոլոր ընտանիքը կոչում էր նրան Լաստենի ոչ ուրիշ անունով։ Ունենալով լաւ ստամոքս և վերին աստիճանի հանգիստ անցկացնելով ժամանակը, Լաստենին և արագ էր աճում։ Նա արդէն փորձում էր ոտի կանգնել։ Միշտ լաւ տրամադրութեան մէջ էր լինում։ Երբ նրա ծնողները յոգնում էին նրա հետ խաղալուց, դնում էին կողովի մէջ, նա չէր լալիս, ինչպէս ուրիշ երեխաներ, այլ մատը բերանին և աչքերը յառած դէպի առաստաղը, նայում էր ճանճերի թռչկոտալուն և այն ժամանակ էր միայն շարժւում, երբ նրանցից մէկը նստում էր նրա երեսին։

Հասաւ ժամանակը երբ Լաստենին սովորեց չորեքթաթ տալ, այն ժամանակ նա երկար ճանապարհորդութիւններ էր անում խոհանոցի մաքուր յատակի վրայ։ Նա բացում էր պահարանները և ինչ որ ձեռն էր ընկնում, հանում էր և զւարճութեամբ պատռում էր թուղթը։ Ինչպէս փայլում էին նրա աչքերը զւարճութիւնից, երբ նրան յաջողւում էր շուռ տալ թասով ջուրը։ Ինչպէս զմայլւած էր նա առուակով, որը հոսում էր մաքուր սպիտակ յատակի վրայ։ Մէկ անգամ նրա ձեռքն ընկաւ մի փաթեթ կապուտակ ներկերի, իսկոյն նա ըսկսեց ներկել իր շորերը, երեսը, ձեռքերը և խոհանոցի յատակը։ Երբ նրա մայրը բանջարանոցից վերադարձաւ տուն, որտեղ փռում էր լւածքը, իր աղջկանը չճանաչեց։

Ամբողջ թաղում Մարթա Գրիմրոզը համարւում էր ամենալաւ և աշխատասէր տիրուհի և նա չէր կարող թոյլ տալ իր տան մէջ ամեն տեսակ անկարգութիւն։ Լաստենին խիստ իշխանութեան տակ ընկաւ։ Երբ նա սկսում էր նայել իր ձեռքերին,. սւաղած ածուխի և մոխրի մէջ, այն ժամանակ աւելի մի ուժեղ ձեռք, խլում էր նրանից ածուխն ու մոխիրը և լւանում էր նրա կեղտոտած ձեռքերը, իսկ խիստ ձայնն ասում էր.

—Չի կարելի, չի կարելի։

Այդ ձայնը և ձեռքը ամեն տեղ հետևում էին նրան, բայց Լաստենին ուրախ հնազանդւում էր իր վիճակին և վերջապէս տեսաւ որ իր մօրն առանձին զւաճութիւն էին պատճառում կրկնել այդ բառերը, ուստի և ինքն էլ սկսեց կրկնել միևնոյնը։

—Չի կարելի, չի կարելի։

—Զարմանալի երեխայ է—ասում էր Մարթան իր ամուսնուն.—երբէք չի լալիս։ Բայց դու չես կարող երևակայել, թէ նա ինչքան բան է փչացնում։

Նրա համար գործ էլ չըկայ անելու, առաւօտից մինչև երեկոյ։

Մէկ անգամ նա իր գլուխն մտցրեց կճուճը և մի րոպէ այնպէս նստած էր տաշտի մէջ։ Հազիւ թէ մաքրեցին, նա ազատուեցաւ, գնաց մառանը, տեսաւ տակառով գարեջուրը և իսկոյն սկսեց իր իշխանութիւնը, հանեց ծորակը և գարեջուրը սրսկեց ուղիղ երեսին և այդ նրա համար ոչինչ չէր։ Երեկոյեան երբ հայրը և եղբայրները վերադառնում էին դաշտից տուն, խօսակցութեան նիւթը Լաստենին էր, որը վեհանձն նստած էր հօր գրկում, լաւ հասկանալով որ հերոսուհին ինքն էր. ծափահարում էր, ծիծաղում և ամենից բարձր աղաղակում։

Բայց թարմ խոտը, մի առանձին զուարճութիւն էր պատճառում Լաստենուն հնձելու ժամանակ. երբ խոտը տան շուրջը փռած չորացնում էին, Լաստենին խաղում էր, վազում նրա վրայ, ինչքան սիրտն ուզում էր։ Նրա զուարճութիւնն վերին աստիճանի էր հասնում, երբ եղբայրները խոտի մէջ ծածկում էին նրան։ Անուշահոտ օդը լցւում էր աղաղակներով, երբ խոտի միջից երևում էր Լաստենու ձեռքը և ուրախ երեսը։ Լաստենին մնում էր բաւական նրանով, որ իր եղբայրներին զուարճացնում էր։

ՕՐ. ԵՂԻՍԱԲԷԹ ՆԱԽՍԻԴԵԱՆ

(Կըշարունակւի)



ԱՂԲԻՒՐԻ Պ ՄՐՑԱՆԱԿ



Պատմեցէք բովանդակութիւնը

ԶՎԱՐՃԱԼԻՔ

Հարցեր հանելուկներ բառախաղ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

—Կատուները մեզ ի՞նչ օգուտ են տալիս.

—Նրանք ոչնչացնում են մկներին.

—Իսկ ինչի՞ են պէտք մկները.

—Նրանք ծառայում են որպէս կերակուր՝ կատուների համար։

—

ԲԱՒԱՐԱՐ ՊԱՏԱՍԽԱՆ

Պ. բժիշկ, մեր հարևանուհին մի երեխայ ծնաւ, երեւակայեցէք, արդէն մի ատամ ունի. նա ո՞ղջ կըմնայ։

—Ոչ մի կերպ. անշուշտ կըմեռնի։

—Ներեցէք սակայն, չէ՞ որ Նապոլէօն առաջինն երբ ծնւեց՝ նմանապէս մի ատամ ունէր։

—Իսկ միթէ նա հիմա կենդանի է.

—Ո՛չ, վաղուց մեռել է։

—Դէ, տեսնում էք...

—

ՀԱՆԴԻՊՈՒՄՆ

—Օ՜, բարև, բարև,—միմեանց ձեռքերն ամուր սեղմելով՝ ասում էին երկու երիտասարդ,—ինչպէս ես... Ասա՛, խնդրեմ, ինչո՞վ ես դու այժմ պարապում։

—Հըմ... երևակայիր քեզ, որ հէնց ինքս էի ուզում հարցնել քեզանից նոյնը...

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Հ. Բ.

3) Մի բառ գտէք մի վանկից,
Բաղկացած երեք տառից,
Ուղիղ կարդաս և լաւ զննես՝
Ձեր տանը ամեն օր կըտեսնես։
Եթէ վերջից կարդաս,
Հիանալի բան կըստանաս,
Եւ եթէ ինքդ լինես երաժիշտ,
Միշտ այդ բանը գործ կածես։
(Եթէ դուք պատասխանէք՝
Խնդրեմ «Աղբիւրին» ուղարկէք։)

—

4) Մի բառ գտիր երկու վանկից,
Մէջն էլ «ը» տառը խառնիր,
Ու նրան քեզ հետ փնտրիր՝
Գիշերները մանգալիս։

—

5) Կլոր է, փոքր է,
Մինչև երկինք հասնում է։

—

6) Այն բանի անունը, որ ես գիտեմ,
Ծառերին որպէս խրատ է ծառայում.
Եթէ այդ բառը թարս կարդալ ուզեմ՝
Գրեթէ նոյն տեսակ պաշտօն է վարում։

—

7) Ինձ պարտիզում շատ կըտեսնէք,
Թէ որ ասեմ՝ մեծ եմ — մեծ չեմ.
Եթէ անունս գտնել ուզէք,
— Թէև ստիպել ձեզ կարող չեմ —
Ինձ աջ կողմից կարդացէք,
Կըշեռքի մօտ փնտրեցէք։

—

ԹՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Առաջ. Հ. Բ.

8) 1484-ին աւելացնել մի այնպիսի թւաբանական նշան որ ստացւի տասնուվեց։

—

9)

Այս քառակուսիների մէջ մըտցնել 1-ից մինչև 20՝ այնպէս որ բոլոր տողերում ստացւի 42։

—

ԲԱՌԱԽԱՂԵՐ

Երբոր պատերազմում մեռաւ Վահան,
Ինչու դուք չըկրեցիք վահան։

—

Երբոր կանչում էինք, Հայրապետ,
Հայ ազգ, ինչու չընտրել նրան հայրապետ։

—

Թիֆլիսում հրատարակւում է «Աղբիւր»,
Արդեօք նրանք բերել են աղ բիւր։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Ռուսաստանում ժողովրդական գրադարանները համեմատաբար նոր բաներ են, նրանք սկսեցին երևան գալ վաթսունական թւականների կիսից մեծ քաղաքներում, առաջ Մոսկւայում, յետոյ էլ Պ. Բուրգում։ Վերջին երկու-երեք տարիներում մամուլի մէջ երևացին տեղեկութիւններ՝ մի քանի փոքրիկ քաղաքային և մինչև անգամ գիւղերի մէջ փոքրիկ գրադարաններ հիմնելու մասին։ Արևմտեան Եւրոպայում և Հիւս. Ամերիկ-Միաց. Նահանգներում այս բանի մէջ մեծ յառաջադիմութեան են հասել, թէպէտ և ժողովրդի մէջ (շնորհիւ գրադարանների) գրքեր տարածելու առաջին փորձերը վերաբերում են միայն քառասնական թւականների վերջին և յիսունական թւականների սկզբին, իսկ մի քանի երկիրներում դեռ էլ աւելի ուշ։ Այդ ասպարիզում առաջին տեղն են բռնում Անգլիան և Միացեալ Նահանգները. այդ պետութիւնները ներկայումս ամենամեծ թւով ժողովրդ. գրադարաններ ունին։

Դեռ 1879 թ. հրատարակւեց մի օրէնք, որով մեծ Բրիտանիայի բոլոր քաղաքներում թոյլատրւում էր մտցնել գրադարանական հարկ։ Առաջին անգլիական ժողովրդական գրադարան բացւել է Մանչեստրում դեռ 1852-ին։ Երեսուն տարուց յետոյ Մեծ Բրիտան. դրանց թիւն էր 100, իսկ 90 թւակ. սկզբում.—225. 1890 թ., գոնէ, 40 անգլ. քաղաքներ ունէին այնպիսի ժողովրդական գրադարաններ, որոնցից իւրաքանչիւրը կարող էր լրացում տալ մի տարւայ ընթացքում 100,000 գրքի պահանջման։ Երեսուն մեծ քաղաքների (Բացի Լոնդոնից և Գլազգոյից) 5 միլիօն ազգաբնակութեամբ ժողովրդական գրադարանները կանոնաւոր կերպով տալիս են տարին մինչև 10 միլլիօն գրքեր ընթերցանութեան համար։ Ամերիկայում առաջին ժողովրդական գրադարանի բացման պատիւը պատկանում է Բոստոն քաղաքին, որ ներկայումս աշխարհի ամենաընդարձակ հիմնարկութիւնն է իր տեսակում։ Բոստոնի գրադարանը հիմնւել է համարեա միաժամանակ Մանչեստրի գրադարանի հետ, քաղաքի և մի քանի մարդկանց տւած նւիրատւութեամբ։ 1882-ին նրա գրքերի հատորների թիւն հասնում էր մինչև 400.000-ի, իսկ ներկայում՝ 560.000-ից աւելի է։

Բոստոնի օրինակին շուտով հետեւեց և ամբողջ երկիրը, այնպէս որ ներկայում Միացեալ Նահանգներում 270 քաղաքներ ունին շատ թէ քիչ նշանաւոր գրադարաններ։

Այդ շարժումը տարածուեց և ուրիշ երկիրներ, ժող. գրադ. հիմնուեցան Պարիզում, Վիեննայում, Բերլինում, Միւնխէնում, Հաննօվէրում, Ֆրանկֆուրտում, Դրեզդէնում, մինչև անգամ Եւրոպայի և Ամերիկայի սահմաններից դուրս երկրներումն էլ—Աւստրալիայում, Նոր-Զելանդիայում, հարաւային Աֆրիկայում և Չինաստանում։ Այժմ աշխարհիս ամենամեծ բիւջէ ունեցող տասը ընդարձակ գրադարաններից եօթը ժողովրդական են։ Տարեկան ծախքերի կողմից Բրիտանական թանգարանը բռնում է առաջին տեղը, իսկ Բոստոնի ժողովրդական գրադարանը երկրորդ տեղը։ 1890-91 թ. հաշիւներից երևում է, որ վերոյիշեալ հիմնարկութիւններից առաջինի բիւջէն է 8 միլիօն մարկ, իսկ երկրորդինը՝ 670,000։ Բայց Բոստոնի գրադարանն այդ դէպքում աւելի բարձր է քան Պարիզի ազգային գրադարանը, որ ծախս ունի տարեկան 660,000 մարկ, այսինքն այնքան, որքան ծախսում են Լոնդոնի ժողովրդական գրադարանները։ Տարեկան ամենաշատ ծախք ունեցող աշխարհի 10 մեծ գրադարանների շարքում Բերլինի Կայսերական գրադարանը բռնում է 6-րդ տեղը, մինչդեռ Չիկագոյինը 5-րդ տեղը։ Այնուհետև գալիս են Սիդնէյի, Մանչեստրի, Լիվերպուլի և Պարիզի գրադարանները։

Բացի Բոստոնից, հարուստ են գրքերով և շատ քաղաքների գրադարաններ։ Լոնդոնի, Նիւ-Եօրկի և Պարիզի գրադարաններն ունեն իւրաքանչիւրը գրեթէ ¼ միլիօն հատոր գրքեր, Չիկագոյինը և Մանչեստրինը-200000, Բերլինինը-110,000, Վիեննայինը-40000 եայլն։ Եւ այդ տասնեակ հազարներով գրքերը Եւրոպայի և Ամերիկայի քաղաքների ազգաբնակութիւնը կարդում է եռանդով. Մանչեստրի գրադարանը իր գոյութեան առաջին տարին տուել է իր դահլիճում կարդալու 61,000 հատոր և մօտ 80,000 հատոր էլ բաց է թողած տներում կարդալու։ Այժմ այդ թւերը տասնապատկուել են։ Օրինակ՝ 1890 թ. Մանչեստրի գրադարանից վերցրուած է 1,500,000 հատոր գիրք, բացի այդ լրագրական բաժինն էլ այցելել են 3 միլիօն ընթերցողներ։ Լոնդոնի 17 ժողովրդական գրադարաններ, 1890 թ. տըւել են կարդալու 2,500,000 հատոր։ Այդպիսի առաջին երկու գրադարանները Լոնդոնում հիմնուել են 1886-ին, հետագայ տարին էլ հիմնուել են 10 հատ։ Այդ ժամանակները Լոնդոնի հասարակութեան մէջ կազմուեց մի քանի յանձնաժողով, որոնք, միմեան-

ցից անկախ, իրանց նպատակ դրեցին ստեղծել կրթողական հիմնարկութիւններ, որոնց նմանները առաջ հիմնուել էին Մանչեստրում և անգլիական ուրիշ քաղաքներում։ 1890-91 թ. Լոնդոնում հաշւում էին 28 շրջաններ, ուր ժողովրդական գրադարաններ մասամբ էլ պիտի բացւէին ամենամօտ ժամանակում։

Անգլիայի մնացած մեծ քաղաքները, բացի մէկից, ունին այնպիսի ժողովրդ. գրադարաններ, որոնք բաւարարութիւն են տալիս ազգաբնակութեան գրքերի պահանջներին; մինչև անգամ աւելի մեծ չափերով, քան Լոնդոնինը։ Լիւերպուլի, Բիրմինհամի, Լիդսի, Բրիստոլի և Էդինբուրգի ժողովրդական գրադարանները տարին տալիս են կարդալու մի քանի հարիւր հազարական գրքեր, այնպէս որ այդ քաղաքներից իւրաքանչիւր բնակչի վրայ գալիս է միջին թւով 2—3 կարդացած գիրք։

Անգլիայի ժողովրդակ. գրադ. հիմնւում և պահպանւում են գլխաւորապէս այն տուրքերով, որոնք տրւում են երկրի արժողութիւնից՝ 1000-ին ստերլինգից 1 պէնս։ Մի քանի քաղաքներում այդ տուրքով պահւում են ոչ միայն գրադարաններ, այլ և թանգարաններ։ Այդ պատճառով մի քանի համայնքներ պնդում էին գրադարանական տուրքը բարձրացնել մինչև 2 պէնս։ Դրադարանների պահպանութեան մի ուրիշ աղբիւրն էլ կազմում են Անգլիայում նւիրատւութիւնները։ Օրինակ՝ Պրեստոն քաղաքը ստացաւ մի բարեգործից 2,000,000 մարկ հիմնելու մի գրադարան և թանգարան. մի ուրիշ փոքր քաղաքի ժողովրդական գրադարանի նւիրել են 300,000 մարկ. Էդինբուրգեան գրադարանին նոյն տեսակ նւիրել են 1,000,000 մարկ։ Անգլիայի մեծ քաղաքներից միայն Գլազգոն է, որ գրադարան չունի։ Ուշադրութեան արժանի է, այն հանգամանքը, որ քաղաքային վարչութիւնը կամենալով ունենալ այդպիսի մի օգտակար հիմնարկութիւն, նրանից քիչ ժամանակ առաջ մերժեց ընդունել այդ նպատակին զանազան անձանց նւիրած 132,000 ֆ. ստ.։

Եթէ Անգլիայում մեծ քաղաքների ժողովրդական գրադարանների գործունէութիւնն այնքան էլ մեծ չէ, Ամերիկայի նոյն տիպի հիմնարկութիւններն էլ յետ չեն մնում նրանից այդ դէպքում, Բոստոնի գրադարանը 1856 թ. բաւականութիւն է տւել 33,000 պահանջի, իսկ 1859 թ. այդ թիւը կրկնապատկւել է, բացի դրանից գրադ. գիտական առանձին բաժինը նոյն տարւայ ընթացքում բաշխել է 43,000 հատոր գիրք. 1870-ական թւականներին Բոստոնում ժողովրդական գրադարանը 8 մասնաճիւղեր

ունէր և ընթերցողների թիւը հասնում էր 12,000,000ի։ 1890-91 թ. հաշիւներից երևում է, որ Բոստոնի ժողովրդակ. գրադարանները տուել են կարդալու իւրաքանչիւր տարում 1,300,000 հատոր, նոյնքան էլ տուել են Չիկագոյինը, Նիւ-Եօրկինը 1000000 հատոր և այլն։ Առհասարակ այդ գործը շարունակւում է զարգանալ և նրան օգնում են թէ կառավարչական և հասարակական հիմնարկութիւնները և թէ մասնաւոր բարեգործները։ Նիւ-Եօրկը 75,000 հ. գիրք բաշխող գրադարաններին օժանդակութիւն է տալիս 5,000 դոլլար, այդ օժանդակութիւնը աւելանում է գրադարանի յառաջադիմութեան դէպքում. այնպէս որ իւրաքանչիւր նոր 100,000 հատորի բաշխելով պիտի նպաստել 5000 դ.

Թէ բարեգործութեան շնորհիւ բացուած ժողովրդական գրադարանները ինչ չափով են օժանդակութիւն ստացել, ցոյց են տալիս հետևեալ օրինակները։ Ն. Եօրկի ամենամեծ ժողովրդական գրադարանը (Astor Librairy) հիմնուել է մի ընտանիքի միջոցներով, որ ծախսել է նրա վրայ 2 միլիօն դոլլար։ Չիկագոյում մի ամերիկացի նուիրել է յօգուտ ժողովրդական (գիտական) գրադարանի 3 միլ. դոլլար. իսկ մի ուրիշը այդ նպատակով նուիրել է Ամերիկայի մի քանի քաղաքների 10 միլիօն մարկ։

Ֆրանսիայում ժող. գրադ. հիմնուել են աւելի ուշ քան Անգլիայում, բայց ներկայումս այնտեղ էլ նրանց թիւն արագ արագ աճում է։ Այսպիսով, միայն Սենայի դեպարտամենտներում 3 տարուայ ընթացքում հիմնուել են 200 ժող. գրադար. Պարիզում դեռ 1879 գոյութիւն ունէին ընդամենը 11 կառավարչական (муниципальный) գրադարաններ 60,000 հ. գրքերով, 1891 դրանց թիւը հասաւ 64,000-ի, գրքերի պաշարը հասաւ $^1/_4$ միլիօնի, իսկ Պարիզի գրադարաններից օգտուողների թիւը, մեծ մասը տներում, հասաւ 1,500,000. բացի դրանից Պարիզում գործում են նմանապէս 20 մասնաւոր գրադարաններ, որոնք ժողովրդական գրադ. բնաւորութիւն են կրում և բաշխում են մինչև 500,000 հատ գիրք։

Այդպէս չէ առաջադիմում գրադարանական գործը Գերմանիայում և Աւստրիայում. բայց այդ տեղ էլ ժողովրդական գրադարանները մեծ յաջողութիւն ունին։ Բեռլինում ($1^1/_2$ միլ. բնակ.) 26 ժող. գրադարանները տարին տալիս են կարդալու 339,000 հ. գրքեր, Վիեննայի գրադարանները 235,000 հատոր։ Անգլիական և Ամերիկական գրադարաններինհետ գերմանականը և աւստրիականը չեն կարող համեմատուել, բայց եթէ ինկատի ունենանք որ շատ քաղաքների գրադարաններ բաց-

ւել են վերջին ժամանակներս, այն ժամանակ չէ կարելի խոստովանել նրանց գործունէութեան արդիւնքը, յամենայն դէպս, բաւական գոհացուցիչ։ Պրոֆէսոր Րէյէր իր մէջ գրքի մէջ ցոյց է տալիս թէ ժողովրդական գրադարանների գործը ինչ մեծ չափերով զարգանում է Եւրոպայում և Աւստրիայում։ Սակայն մի հարց է առաջ գալիս, թէ արդեօք այդ գրադարանները ծառայում են ժողովրդի այն դասակարգին, որոնց համար գլխաւորապէս բացուած են։ Գրադարանի հաշիւները պատասխանում են այդ հարցին։ Անգլիական և Ամերիկական գրադարանները յաճախողների մեծամասնութիւնը կազմում են բանւորները, արհեստաւորները և մանր առևտրականները։ Այսպէս օր․ Մանչեստրի գրադարանի ընթերցողների 60 % կազմում էին 50-ական թ. բանւորները և արհեստաւորները իրանց ընտանիքներով։ Գերմանական քաղաքների բանւոր դասակարգը փոքր չափով է օգտւում գրադարանից. պր. Րէյերի հաշւով Բերլինում ու Վիեննայում նրանք յաճախողների կէսն էլ չեն կազմում. ընթերցողների մեծամասնութիւնը կազմում են ուրիշ արհեստի մարդիկ. ուսուցիչներ, ծառայողներ, վաճառականներ և արդիւնաբերողներ։

Պր. Րէյէրի գրքի մէկ գլուխը նւիրուած է մի հետաքրքիր հարցի. ինչ է կարդում ժողովուրդը։ Ժողովրդական գրադարանի հրատարակած հաշիւների մէջ զարմանալի միանմանութիւն է երևում կարդացած գրքերի տեսակների մէջ։ Ամեն տեղ առաջին տեղը բռնում է վիպական բաժինը, միջին թւով 70-80 %, մօտ 0 % պատմականը, աշխարհագրութիւն և ճանապարհորդութիւն, 5 % բնագիտական և տեխնիկական գրքերը, կրօնական և աստւածաբանական գրքերը-0,6 %։

Անգլիական և Ամերիկական ժողովրդական գրադարաններում գրքերի ընթերցանութեան հետ չափազանց զարգացած է և լրագրների և ամսագիրների ընթերցանութիւնը։ Հիւսիս. Ամերիկայում գրեթէ իւրաքանչիւր նշանաւոր գրադարանը ստանում է հարիւր և աւելի պարբերական թերթեր զանազան բովանդակութիւններով։ Նիւ-Եօրկի գրադարանը 1868 թ. ստանում էր 215 լրագիր, Բոստոնինը նոյն թւին 287, իսկ 1873-ին 474 հատ։

Ներկայումս աշխարհի ամենամեծ Բոստոնի ժող. գրադարանը ստանում է մօտաւորապէս 1,000 ամենատեսակ լրագիր և ամսագիր։

ՍԱՌՑՐԱԾ ԿԱԹ

Ֆրանսիայում արդիւնաբերութեան մի նոր ճիւղ է բացւել— այն է՝ սառցրած կաթի վաճա-

ուումը։ Կաթը սառեցրած բոլորովին թարմ է մնում, մինչև մի քանի ամիս։ Սառույց պատրաստելով մեքենայի միջոցով՝ թիթեղեայ ամանների մէջ սառեցնում են կաթը և յետոյ ուղարկում են երկաթուղով, շոգենաւով զանազան տեղեր։ Ստացուած կաթը գործ ածելուց մի քանի րոպէ առաջ դնում են կրակի վրայ, և այդպիսով դառնում է սովորական թարմ և պէտքական կաթ։

ՆԵՐԿԱՅ ԴԱՐՈՒՍ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՏԱՄՆԵՐԸ

Հնագէտները աշխարհիս ամեն կողմում գտնելով հողի տակից նախնի մարդկանց գանգեր, մի ընդհանուր ֆիզիօլօգիական փաստ են գտել, թէ ինչու այժմեան մարդկանց ատամները փչացած են։ Նկատուած է, որ նախապատմական մարդկանց և եգիպտական մումիաների ատամները շատ առողջ և ամուր են եղել։ Լոնդոնի անտրոպոլոգիական ընկերութեան վերջին նիստերից մէկում պրոֆեսոր Կիլդերֆորս Սմիտը ներկայացրեց ժողովին մօտ մի դիւժին ատամներ, որ պատկանում էին հնդկական Սիու ցեղին։ Այդ ատամներից երևում էր, որ նրանք արդէն բթացել էին, բայց նրանց վրայ ճիճուներից ոչ մի փչացած և վնասուած տեղեր չէին երևում։ Ներկայումս ոչ միայն քաղաքներում, այլ գիւղերում էլ առողջ ատամներ հազիւ են պատահում, մանաւանդ հասակ առած մարդկանց մէջ։ Ինչո՞վ բացատրենք այս երևոյթը։ Ամեն մի ատամի ներսը, կազմուած է միջուկից, միացնող ոստայններից, որոնց միջով ճիւղաւորւում են ատամին զգացողութիւն տուող ջղերը և արեան անօթները։ Կիլդերֆորս-Սմիտը ատամների փչանալը բացատրում է գլխի ջղերի մշտական լարուած դրութիւնից, որ առաջ է գալիս ներկայ կուլտուրական կեանքի ունայնութիւններից և այլ յուզմունքներից։ Գլխի ջղերի այդ լարուած դրութիւնը այնքան է ազդում երկրորդական ջղերի վրայ, օրինակ ատամների ջղերի վրայ, որ վերջիններիս արգելք են լինում կատարել իրանց պաշտօնը։ Բացի այս պատճառից, անգլիական բժիշկը առաջ է բերում ատամների փչանալու և մի ուրիշ պատճառ, այն է՝ քաղաքացիների ցաւարեր և հակաառողջական կեանքի եղանակը, մատաղ հասակում անյարմար կերակուրներ գործածելը, որ դանդաղեցնում են ոսկորների կանոնաւոր զարգացումը, ատամի արձաքարի ոսկրանալը և տաք կերակուրները։ Մի քանի դեղեր էլ վատ են ազդում ատամների վրայ։ Կիլդերֆորս-Սմիտի կարծիքով ատամների պահպանելու միակ միջոցն է առողջապահութիւնը։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Վեհափառ Կաթուղիկոսն արդէն Սրմաւէր է հասել։ Ճանապարհին Հայոց Հայրապետին ներկայացել են համարեա բոլոր իշխաններում

իշխանութեան տեղական ներկայացուցիչները և ժողովուրդի ամեն դասակարգից մեծ բազմութիւն։

—

Ղարաբաղի նախկին առաջնորդ Կար. եպ. Այւազեանը Շուշուց իր մեկնելուց մի օր առաջ 14 քահանայ է ձեռնադրել։

—

Փետրուարի 11-ին Ներսիսեան դպրոցի ուսուցիչ և շատ անդամ տեւչի պաշտօնակատար պ. Ամբրամ Մանդինեանի 25-ամեայ մանկավարժական գործունէութիւնը տօնւեց Թիֆլիսում ընկերական շրջանի մէջ։ Պ. Յօբելեարը ուղերձներ և մի քանի ընծաներ ստացաւ։

—

Վիեննայից գրում են, որ առաջիկայ նոյեմբերի մէկին տօնւելու է գեր. Այդինեանի 50-ամեայ քահանայութեան յոբելեանը։

—

Ալւանից Կաթողիկոսների եկեղեցական զգեստների և դոհարեղէնների մի մասը գողացւած է։ Ղարաբաղի ժողովուրդը իմացել է այդ և մեծ յուզմունք է տիրում այնտեղ։ Այդ հնութիւնները շատ թանգագին և սրբազան դանձեր են։ Կոնսիստորը քննութիւն է սկսել։

—

Անգլիայում և Ռուսիայում՝ հրէաների մէջ լուրջ մտածութեան առարկայ է դարձել հիմնելու Երուսաղէմում մի համալսարան։ Համաշխարհային հրէական միութիւնն արդէն ստացել է խոշոր ընծայաբերութիւն այդ նպատակի համար, իսկ «Ahabat Ziod» ընկերութիւնը հեյդելբերգում առաջարկում է իր ամբողջ դրամագլուխը հիմնելի համալսարանի համար։

ԱՂԲԻՒՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Աստրախան. Գ. Գ. Հայկական հարցերին վերաբերեալ լուրեր, լրագրական տեղեկութիւններ տպագրւում են Տարազում։ Աղբիւրում անյարմար է և նշանակութիւն էլ չունեն այդ տեղեկութիւնները։ Մենք պիտի աշխատենք նոյն իսկ Տարազում տպագրել յուզող խնդիրներին վերաբերեալ ոչ թէ կցկտուր լուրեր, այլ աւելի պարզաբանութիւններ։ Մինչև այժմ մեզ անհնար եղաւ ձեռք բերել Սասունի քարտէզը, մի օրինաւոր ձեռնապարհորդական գրւածք այդ երկրի մասին։ Մենք չենք կամենում շինծու, անկապ յօդւածներ տպագրել։ Կարևոր բանակցութիւններ սկսել ենք և կըտպագրենք ամփոփ յօդւածներ՝ պատկերներով։

Կ. Պոլիս. Ա. Ձեր յօդւածը կըտպւի, պատւիրածները փութացէք կատարել։

Ա. Ւ. Շահխ. Ձեր դրածն էլ կարդացինք, շատ է հեռու խականից. մեր ստացածներից և ոչ մէկը տպագրել չի կարելի։ Ցաւածում ենք բացատրութեան տպագրելը մինչև Աղբիւրի № 3-ի լոյս տեսնելը։

ԱՂԲԻՒՐ ՏԱՐԱԶԻ ՆՒԻՐՈՂՆԵՐ

Տիկին Գայեանէ Խուշունց նուիրել է Աղբիւրի 3 օրինակ 1) Դաշբուռն (Եղդիրի գաւառ) 2) Մոլլաբայազէդ (Էջմիածնի գաւառ) և 3) Ղամարլուի (Էջմիածնի գաւառ) գիւղական հայ ուսումնարաններին։ Պ. Եղիշէ Մադաթեան մի օր. Աղբիւր և մի օր. Տարազ Ղարաբաղի Թեմական դպրոցին։ Պ. Ալ. Պանկխեանց մի օր. Աղբիւր Աղնախի հայոց ուսումնարանին։ Տիկին Հեղինէ Մեղւեդեւանց, մի օր. Աղբիւր Ղզլարի հայոց ողայոց ուսումնարանին։ Պ. Յովակիմ Բէգլարեան՝ մի օր. Աղբիւր Բօլնիս-Խաչէն գիւղի ուսումնարանին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փոքրիկ կառապանն իր նժոյգներով (Զիլ-ձիլ—մանկական խաղ) պատկեր։ Ազատւած գերին—Ի. Մ—եանց։ Բթաչափ Սուրէնը (հէքիաթ) փոխադր. Դ. Տէր-Դաւթեանց։ Սորուկները (շարունակութիւն)—Յար. Թումանեանց։ Իմ Գամփռը (պատկեր)։ Նաւակի երգը (ոտանաւոր) Ա. Աթայեան։ Ապերախտ որդին (Ֆրանսերէնից) օր. Ա. Նազարեան։ Թոմաս Գուդից (ոտանաւոր) Մար-Շըմին։ «Դաշտային և ջերմանոցի ծաղիկ» (մանկավարժ. վէպ, Բիչէր Ստօու) օր. Եղ. Նախսեզեան։ Մրցանակ II (պատկեր)։

ԶՒԱՐՃԱԼԻՔ

Հարցեր, հանելուկներ, խնդիրներ, բառախաղեր։

Բ. Յաւելւ. Ժողովրդական գրադարանները Եւրոպայում և Ամերիկայում։ Ստացւած կաթ։ Ներկայ դարու մարդկանց ատամները։ Մանր լուրեր։ Աղբիւրի պատասխաններ։ «Աղբիւր-Տարազի» նուիրողներ։

Խմբագիր հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1895 ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ 1895

XIII-րդ տարի　　　VI-րդ տարի

ԱՂԲԻՒՐ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Ա. *մանկական բաժին.* Մանրավէպ, Զրոյց, Հէքիաթ, Ճանապարհորդութիւն, Կենսագրութիւն, Բնապատմութիւն, Գիտութիւն եւ Արուեստ, Նոր-լուրեր, Այլ եւ այլք:

Զուարճալիք. Մանկական, փիլոսոփական, շախմատի եւ այլ խաղեր, Ռեբուս, Թուաբանական խնդիրներ, Անեկդօտ, Հանելուկ, Շուտասելուկ, Երգեր նոտաներով.

Բ. *բաժին.* Կրթութեան եւ դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ եւ տեղեկութիւններ: Առաջարկութիւններ: Խորհուրդներ: Մատենախօսութիւն եւ Նոր գրքեր: Խառն լուրեր, Պատասխաններ, Յայտարարութիւններ:

ՏԱՐԱԶ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԾՐԱԳԻՐԸ

Գեղարուեստ եւ գիտութիւն: Պատմական, ժամանակակից վէպեր, պատկերներ, Թատրոնական գրուածներ: Բնապատմութիւն: Քննադատութիւն, Կենսագրութիւն. Կար, ձեւ, ձեռագործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային արդիւնաբերութիւն, տնտեսութիւն, ճանապարհորդութիւն եւ արկածք: Երաժշտութիւն եւ Թատրոն: Լուրեր, Տեղեկութիւններ, Յօդուածներ եւ այլն: Ֆէլիետօն, Ծաղր, առած, կատակ: Շախմատի եւ այլ խաղեր, Ռեբուս: Հարցեր, խորհուրդներ: Այլ եւ այլք: Սուրհանդակ, Յայտարարութիւններ:

Անմիջական և սերտ յարաբերութիւն ունենալով Եւրոպայում կլիշէ պատրաստող նշանաւոր գործարանների հետ, մենք արդէն կարելի ենք դարձրել մեր թերթերում բաւական արագութեամբ տպագրել օրւայ հարցերի, դէպքերի հետ համարեա ուղղընթաց և նրանց վերաբերեալ նկարներ, տեսարաններ, պատկերներ: Բացի այն որ ՏԱՐԱԶԸ ընթերցանութեան շատ նիւթ է տալիս բելետրիստիկայից, պակաս էջեր չեն զարդարւում և կրիտիկական յօդւածներով: Գեղարւեստն ու գիտութիւնը քաղւում են հաւատարիմ աղբիւրներից մեր մասնագէտ աշխատակիցների ձեռքով:

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ 1895 Թ. ՊՐԷՄԻԱՆԵՐԸ ԵՆ

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ միեւնոյն հասցէով ստորագրողը իրաւունք ունի 60 կոպեկ մարկաներ ուղարկելով բաժանորդագրութեան հետ ստանալ խակայն հինգ առաջին պօստով հետեւեալ 8 ՊԱՏ. 1) ՌԱՖԱՅԷԼԻ Դրէզդէնեան Գալլերէի ՄԱԴՕՆԱՅԻ եւ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ փոքրադիր պատճէնները խրօմօ-ֆոտոտիպ ԶՈՒՍ պատկեր: 2) ՌՈՒԲԷՆՍԻ ՅԻՍՈՒՍ եւ ՏԻՐԱՄԱՅՐ խրօմօ-օլիօգրաֆիա: 3) ԲԵՐԿՐԱՆՔ, մի շատ գեղեցիկ խրօմօ-ակուարէլ պատկեր: 4) ՇԷՔՍՊԻՐԻ ՌՈՄԷՕ եւ ՋՈՒԼԻԷԹ օպերայից մի թափանցիկ նկար լոյսի դէմ կախելու, կարող է լինել եւ շքեղ էկրան ճրագի, լամպի դէմ: 9) ԾԵՐԵՆՑԻ «ԵՐԿՈՒՆՔ IX դարու» Սասունի կեանքից պատմական վէպ, մօտ 500 երես, վերջինիս պօստի ծախսը խմբագրութեան վրայ է:

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (արտասահմանից 4 ր.):

ՏԱՐԱԶԻ տարեկան գինը 6 ր. (արտասահմանից 10 ր.)

Հասցէն՝ Тифлисъ, ред. жур. „Агбюръ“ կամ „Таразъ“. Tiflis Réd. du jour. „Agbur“ կամ „Taraz“.

Въ журналѣ попрежнему будутъ принимать участіе:

проф. Н. И. Стороженко и А. Н. Веселовскій

и гг. Вл. А. Александровъ, Н. Ф. Арбенинъ, А. С. Аренскій, А Ф. Арендсъ, К. Д. Бальмонтъ, Н. В. Баснинъ, Ю. Безродная, В. А. Беклемишевъ, П. И. Бларамбергъ, П. Д. Боборыкинъ, проф. А. П. Боголюбовъ, К. М. Быковскій, В М. и А. М. Васнецовы, П. П. Веймарнъ, В. Л. Величко, В. В. Верещагинъ, П. П. Викторовъ, проф. М. Я. Виллie, Е. Е. Волковъ, бар. В Г. Врангель, А. Ѳ. Гельцеръ, А. К. Глазуновъ, П. П. Гнѣдичъ, В. А. Гольцевъ, Е. П. Гославскій, А. О. Гунотъ, М. А. Давыдовъ, В. П. Далматовъ, М. М. Далькевичъ, Н. В. Досѣкинъ, В. Е. Ермиловъ, Л М. Жемчужниковъ, П. В. Жуковскій, проф. Д. Н. Зерновъ, И. И. Ивановъ, М. М. Ипполитовъ-Ивановъ, А. И. Ильинскій, Н. В. Казанцевъ, Е. П. Карповъ, Н. Д. Кашкинъ, А. А. Киселевъ, Г. Конюсъ, В. Г. Короленко, Н. А. Касаткинъ, К. А. Коровинъ, М. П. Клодтъ, Н. Р. Кочетовъ, С. Н. Кругликовъ, Т. Л. Щепкина-Куперникъ, Ц. А. Кюи, Л. Ф. Чагоріо, Г. А. Ларошъ, К. Е. Лѣмохъ, К. В. Лебедевъ, А. П. Ленскій, В. С. Лихачевъ, проф. И. А. Линниченко, А. А. Луговой, В. Е. и К. Е. Маковскій, В. М. Максимовъ, Д. Н. Маминъ (Сибирякъ), Э. Э. Матернъ, В. В. Матэ, Г. А. Мачтетъ, С. Д. Милорадовичъ, Д. С. Мережковскій, В. М. Михеевъ, проф. П. И. Миликовъ, Г. Г. Мясоѣдовъ, Э. Ф. Направникъ, П. М. Невѣжинъ, П. А. Нилусъ, Е. С. Некрасова, Вл. И. Немировичъ-Данченко, А. П. Новицкій, Л. О. Пастернакъ, В. В. Переплетчиковъ, В. В. Подкольскій, В. Д. Полѣновъ, И. Н. Потапенко, В. И. Ребиковъ, Н. А. Римскій-Корсаковъ, А. А. Рицони, И. Е. Рѣпинъ, Г. С. Рыбаковъ, К. А. Савицкій, М. П. Садовскій, И. А. Саловъ, В. Я. Свѣтловъ, А. Ю. Симонъ, А. Н. Сиротининъ, В. Д. Соколовъ, К. М. Станюковичъ, В. В. Стасовъ, А. И. Сомовъ, С. С. Соломко, А. С. Степановъ, В. Я. Суреньянцъ, кн. А. И. Сумбатовъ (Южинъ), В. С. Сѣрова, Н. И. Тимковскій, С. Н. Филипповъ, проф. И. В. Цвѣтаевъ, М. И. Чайковскій, А. П. Чеховъ, Вас. и Вас. Чешихины, В. А. Чечотъ, О. Н. Чюмина, В. И. Шенрокъ, А. Н. Шильдеръ, И. И. Шишкинъ, И. В. Шпажинскій, И. Л. Щегловъ-Леонтьевъ, В. Р. Щигровъ, Н. А. Ярошенко, А. А. Ярцевъ, А. Ф. и А. А. Ѳедотовы и другіе.

Подписная цѣна остается прежняя: безъ доставки въ Москвѣ 10 руб., на полгода 6 руб.; съ пересылкой и доставкой 12 руб., на полгода 7 руб.; съ пересылкой за границу на годъ 14 руб., на полгода 8 рублей.

Допускается разсрочка: При подпискѣ 2 руб. и ежемѣсячно не менѣе 1 рубля до уплаты полной подписной суммы.

Редакція и главная контора: Москва, у Арбатскихъ вор. д. Шмидъ. **Отдѣл. конторы:** Петровскія линіи № 15—16, магазинъ бывш. П. К. Прянишникова.

Телефонъ редакціи—890, телефонъ Главной конторы № 1490.

Совмѣстной подписки на „Артистъ" съ Театральной Библіотекой на 1895 г. приниматься не будетъ.